

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Յովհաննես Պալայեանի Յիշատակին

Ամանորի նախօրեակին Լոս Անճելըսի Հայութիւնը ընդհանրապէս եւ Իրանահայերը մասնաւորապէս կորսնցուցին այս համայնքէն ներս վերջին հինգ տասնամեակներուն կարեւոր դերակատարութիւն ունեցած անձնաւորութիւն մը: 90 տարեկանին մեզմէ հեռացաւ սիրուած ու յարգուած անձնաւորութիւն մը՝ Յովհաննես Պալայեանը, որ իր ամբողջ կեանքը նուիրեց հայ մշակոյթին, հայ մամուլին, մեր հաստատութիւններուն եւ Հայաստանին:

Ազգային-հասարակական կեանքէն ներս Յովհաննես Պալայեանի ճանաչողութիւնը սկսած էր Պարսկաստանի Ղազուիմի շրջանէն, ուր հայրը կը ծառայէր որպէս քահանայ: Ապա ան անցած է Թեհրան եւ վերջապէս Լոս Անճելըս, ուր ան ունեցաւ մամուլի, մշակոյթի եւ բարեգործական երկարատեւ քեդուն գործունէութիւն, որ եկաւ հարստացնելու այս համայնքէն ներս մեր ազգային կեանքը, նպաստեց Լոս Անճելըսահայութեան զարթոնքին ու վերելքին ու սատարեց հայապահպան սրբազան գործին:

Քառասուն տարիներ ան իր անհատական ջանքերով հրատարակեց «Քաջ Նազար» երգիծաթերթը, ապա վարեց նոյնանուն հեռատեսիլի հաղորդումը: Ասոց կողքին, ան կը ստանձնէր Հայրենիքէն գեղարուեստական խումբեր ու արուեստագետներ հրաւիրելու եւ համերգներ կազմակերպելու ծանր աշխատանքը:

«Քաջ Նազար»-ի էջերուն վրայ Պալայեան կը հրատարակէր ոչ միայն երգիծական ու ազգային յոռի փառքերը խարազանող գրութիւններ ու ծաղրանկարներ, այլ նաեւ Պարսկաստանի եւ Լոս Անճելըսի հայկական կեանքի մասին կարեւոր տեղեկութիւններ ու յօդուածներ:


Անկեղծ նուիրումն ու վայելած վստահութեան շնորհիւ ան ունեցաւ բարեկամներու ու հովանաւորներու լայն շրջանակ մը, որոնք ոչ միայն բարոյապէս այլ նաեւ նիւթապէս սատարեցին ու հովանաւորեցին Պալայեանի կազմակերպած մշակութային ծրագիրները, համերգներն ու բարեսիրական նախաձեռնութիւնները: Բոլորի մօտ ան կը վայելէր սեր ու յարգանք՝ շնորհիւ իր նուիրուածութեան եւ անխոնջ աշխատանքին:

Պալայեան նաեւ ապրեցաւ Հայաստանով ու Հայութեամբ, որոնք դարձան իր կեանքի անբաժան մասը: Նախկին համակարգի

Փաշինեան. «Մենք Չենք Ներքաշուած Հակաիրանական Կամ Հակաամերիկեան Գործողութիւններու Սէջ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան Գեղարքունիքի մարզի Արտանիշ լեռան լանջէն ֆէյսպուքեան ուղիղ հեռարձակմամբ անդրադարձած է Իրաքի մէջ տեղի ունեցած իրադարձութիւններուն, որոնք լարուածութիւն յառաջացուցած են տարածաշրջանին մէջ:

«Մի խումբ լեռնազնացների հետ բարձրանում ենք Արտանիշի գագաթը, եւ օրուայ իմաստը հաշուելի առնելով՝ սա իմ եւ մեր խաղաղութեան ուղերձն է մեր տարածաշրջանին: Քիչ առաջ տեղի է ունեցել Հայաստանի եւ Իրանի արտաքին գործերի նախարարների հեռախօսակցումը, որի ընթացքում երկու նախարարները քննարկել են տարածաշրջանում ստեղծուած իրավիճակը: Եւ Հայաստանի արտաքին գործերի նախարարը ցաւակցութիւն է յայտնել Իրանի կառավարութեանը եւ ժողովրդին մարդկային զոհերի յանգեցրած իրավիճակի կապակցութեամբ», - ըսած է Փաշինեանը՝ շարունակելով. - «Գիտէք, որ Իրանը մեզ համար բարեկամ երկիր է, Միացեալ Նահանգները մեզ համար բարեկամ երկիր է, եւ այս իրավիճակում, ի հարկէ, մենք չենք կարող ներքաշուել հակաիրանական գործողութիւնների մէջ, մենք չենք կարող ներքաշուել նաեւ հակաա-



Նիկոլ Փաշինեան Արտանիշ լեռան լանջէն ֆէյսպուքեան ուղիղ հեռարձակման ընթացքին

եալ Նահանգները մեզ համար բարեկամ երկիր է, եւ այս իրավիճակում, ի հարկէ, մենք չենք կարող ներքաշուել հակաիրանական գործողութիւնների մէջ, մենք չենք կարող ներքաշուել նաեւ հակաա-

մերիկեան գործողութիւնների մէջ: Եւ մեր ուղերձը այն է, որ Իրանի եւ Միացեալ Նահանգների մեր գործընկերը գերծ մնան այնպիսի քայլերից, որոնք կը վատթարացնեն առանց այն էլ լարուած իրավիճակը մեր տարածաշրջանում եւ միջազգային յարաբերութիւններում»:

Նիկոլ Փաշինեանը նշած է, որ առաջին իսկ պահէն տրուած են բոլոր յանձնարարականները Հայաստանի համապատասխան կառույցներուն՝ «իրավիճակին հետեւելու ուղի-ուղով եւ մեր մատը պահել գարկերակին».

- «Անհրաժեշտ բոլոր քայլերը արուել են, աշխատանքները արուել են: Այդ աշխատանքը նաեւ տարբեր նրբութիւններ է պարունակում, եւ չեմ կարծում, թէ պիտի բոլոր մանրամասներով ներկայացնենք»:

Ուղերձի աւարտին Հայաստանի վարչապետը ըսած է. - «Ես ցանկացայ այս քայլարշաւի վերնագիրը նուիրել խաղաղութեանը մեր տարածաշրջանում եւ ի հարկէ Հայաստանում առողջ ապրելակերպի զարգացմանը»:

Հայաստանի Սէջ Նշուեցաւ Ծննդեան Տօնը



Գարեգին Բ-ի համդիսապետութեամբ Ծննդեան տօնին նուիրուած պատարագ Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ

Հայ Առաքելական Եկեղեցին նշեց Յիսուս Քրիստոսի Ծննդեան տօնը: Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ՝ Յունուար 6-ին, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի հանդիսապետութեամբ մատուցուեցաւ Ծննդեան տօնին նուիրուած պատարագ:

Պատարագին ներկայ էին վարչապետ Նիկոլ Փաշինեանը տիկնոջ՝ Աննա Յակոբեանի հետ, Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյեանը, արտաքին գործոց նախարար Զոհրապ Մնացականեանը, Սահմանադրական Դատարանի նախագահ Հրայր Թովմասեանը, Անվտանգութեան խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեանը եւ պաշտօնատար այլ անձինք:

Ծննդեան եւ Աստուածայտնութեան տօնակատարութիւններու

առաջին չիշտակութիւնները սկսած են 3-րդ դարէն: Արեւելեան քրիստոնէական եկեղեցիները մինչեւ 4-րդ դար Քրիստոսի Ծննդեան տօնը կապած են Աստուածայտնութեան, այսինքն՝ Մկրտութեան տօնի հետ, որ նշուած է Յունուար 6-ին: Բայց 336 թուականին Հռոմի եկեղեցին Դեկտեմբեր 25-ը պաշտօնապէս սահմանած է Յիսուս Քրիստոսի Ծննդեան օր՝ այսպիսով հինէն ի վեր ճիշդ այդ օրը տօնուող Միթրայի տօնակատարութիւնները ժողովուրդի համար վերածելով նոր կրօնական իրադարձութեան:

451 թուականին Քաղկեդոնի ժողովը վերջնականապէս Դեկտեմբեր 25-ը սահմանեց Ծննդեան

Հայաստանի Համախառն Ներքին Արդիւնքը Արձանագրած է Աճ Առաջ Անցնելով Վրաստանէն

Արժույթի Միջազգային Հիմնադրամի (IMF) տուեալներով, մէկ շունչին ինկող համախառն ներքին արդիւնքով Հայաստանը 2019-ին առաջ անցած է Վրաստանէն, իսկ այս տարի պիտի անցնի նաեւ Ատրպէյճանէն:

Հիմնադրամի պաշտօնական կայքէջին մէջ հրապարակուած թիւերուն համաձայն, 2019 թուականին Հայաստանի մէջ մէկ շունչին ինկող համախառն ներքին արդիւնքը (ՀՆԱ) կազմած է 4530 տոլար, Վրաստանի մէջ՝ աւելի քիչ 4290, իսկ Ատրպէյճանի մէջ աւելի շատ՝ 4690: Սակայն արդէն այս տարի, համաձայն IMF-ի գնահատականի, Հայաստանի մէջ մէկ շունչին բաժին պիտի իջնայ 4760 տոլար, Ատրպէյճանի մէջ այն պիտի կազմէ 4720, իսկ Վրաստանի մէջ ա՛լ աւելի քիչ՝ 4630 տոլար:

Կանխատեսման համաձայն, 2020 թուականի արդիւնքներով խորհրդային 15 հանրապետութիւններու շարքին Հայաստանը պիտի զբաղցնէ 8-րդ տեղը՝ հակառակ 1988-ի երկրաշարժին, դարբաղեան պատերազմին, շարունակուող շրջափակման եւ տասնամեակներ տեւած բրոնմփացուած համակարգին:

Ըստ IMF-ի, յետխորհրդային երկիրներէն 2020 թուականին

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ատրպեյճանի Եւ Քոչարյանականների Շահերը Երբեմն Համընկնում Են

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՐԳՍԵԱՆ

Ֆեյսբուքյան ինչ-որ ֆեյք (կեղծ) օգտատեր օրեր առաջ ապատեղեկատուութիւն էր տարածել, իբրեւ թէ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը իրանցի գեներալ Ղասեմ Սոլեյմանիի սպանութեան կապացութեամբ շնորհաւորել է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփին: Ներհայկական պարզունակ ապատեղեկատուութիւնը արագորէն դուրս է եկել հայկական միջավայրից, սկզբում տարածուել ատրպեյճանական մամուլում, այնուհետեւ՝ ներթափանցել իրան: Կատարուածին պատշաճ կերպով արձագանքել է Հայաստանի ԱԱԾ-ն, քանի որ դա ըստ էութեան լրջագոյն մարտահրաւէր է ՀՀ ազգային անվտանգութեան համար: Մասնաւորապէս՝ ֆեյք օգտատէրը բացայայտուել է ու ձերբակալուել:

Ասուածի համատեքստում հետաքրքրական է նաեւ այն փաստը, որ ձերբակալուած անձը ԱԱԾ-ի տարածած տեսանյութում ներկայանում է որպէս Ռոբերտ Քոչարեանի աջակից եւ իր քայլը արդարացնում երկրորդ նախագահին սատարելու անհրաժեշտութեամբ: Իբրեւ թէ ինքը համաձայն չի եղել Քոչարեանի բանտարկութեան հետ եւ փորձել է վարկաբեկել ՀՀ կառավարութեանը, առանց հասկանալու, որ վնաս է հասցնում Հայաստանի ազգային անվտանգութեանը:

Շատերին կարող է թուալ, թէ սա ընդամէնը մասնաւոր դէպք է եւ Հայաստանի յատուկ ծառայութիւններին փոքր միջադէպից մեծ ու արհեստական աղմուկ են բարձրացնում: Ի հարկէ միջպետական փոխյարաբերութիւնները չափազանց բարդ են ու բազմաշերտ եւ համանման մանրուքները չեն կարող որեւէ վտանգ ներկայացնել իրանի կամ էլ ԱՄՆ-ի հետ մեր բարեկամական փոխյարաբերութիւններին: Եւ իսկապէս բուն խնդիրը շատ աւելի խորն է եւ աւելին, քան Դիանայ Յարութիւնեան ներկայացող անձի քայքայիչ գործողութիւնն է: Խօսքը Հայաստանի տեղեկատուական անվտանգութեան մասին է, ինչը 21-րդ դարի ամենանվտանգաւոր սպառնալիքներից մէկն է: Այս իմաստով Դիանայ Յարութիւնեանի ապատեղեկատվութիւնն ընդամէնը ջրի կաթիլ է ովկիանոսի մէջ, քանի որ մեր պետութիւնը տեղեկատուական անվտանգութեան տեսանկիւնից իսկապէս խոցելի է: Հայաստանին պատերազմ են յայտարարել ինչպէս ներսից, այնպէս էլ արտաքին աշխարհից: Մի կողմից Ատրպեյճանն ու Թուրքիան, իսկ միւս կողմից էլ կեղծ ընդդիմութիւնը: Սրանք տիրապետում են տեղեկատուական այնպիսի ռեսուրսների, որոնց գործակցութեամբ Հայաստանի տարածքում կարողանում են արհեստական հանրային կարծիք եւ օրակարգ ձեւաւորել: Կեղծ հանրային կարծիքի ձեւաւորումը դանդաղ ու աստիճանական գործընթաց է: Այն տարածում է քաղցկեղի տրամաբանութեամբ, այսինքն՝ սկզբում ոչ ոք զլխի չի ընկնում դրա գոյութեան մասին, այն աստիճանական ու մեղմ քայլերով հանրութեանը մօտեցնում է ահաբեկիչ, որն էլ ի վերջոյ պայթում է՝ կազմաքանդելով եւ ձեւախեղելով հանրային կառուցը:

Բայց կայ նաեւ տեղեկատուական պատերազմի երկրորդ տարակերպը: Ի տարբերութիւն առաջինի, այն գործում է կարճաժամկէտ տրամաբանութեամբ: Այսինքն խնդիր է դրուում ապատեղեկատուական փոքրիկ դրսեւորումների միջոցով կայծակնային ներգործութեամբ շարքից հանել ու կազմաքանդել հանրային դիմադրողականութիւնն ու մարտական պատրաստականութիւնը: Տեղեկատուական պատերազմի երկրորդ տարակերպը ոչ պակաս վտանգաւոր է, քան առաջինը: Պարզապէս երկրորդի դէմ առաւել հեշտ է պայքարել, քանի որ կայծակնային ներգործութեամբ տարածուող ապատեղեկատուութիւնը հեշտ յայտնաբերելի ու տեսանելի է: Իսկ արհեստական հանրային կարծիքի ձեւաւորումը ո՛չ տեսանելի է եւ ո՛չ էլ վերահսկելի: Չի բացատրում նաեւ, որ դրա քարոզչական հետեւանքների հետ հանրութիւնը առերեսուի միայն տարիներ յետոյ:

Ձերբակալուած Դիանայի ապատեղեկատուութիւնն անշուշտ տեղաւորում է երկրորդ տարակերպի տրամաբանութեան մէջ: Հաշուարկը հետեւեալն էր՝ իրանցի գեներալի սպանութիւնից յետոյ հայաստանցիների մի զգալի մասը կարեկցանքի եւ սփոփանքի մեխիզմներ էր յղում բարեկամ իրանին: Բնական է, մարդը մարդուն միշտ էլ խաղաղութիւն է ցանկանում, յատկապէս, երբ խօսքը հարեւանի մասին է: Իսկ ապատեղեկատուութեան նպատակն էր ՀՀ վարչապետին ներկայացնել որպէս ամերիկամէտ գործչի, աւելի շուտ՝ ամերիկեան սատարիտի, որը աշակցում է Հայաստանի ամենաշերտ հարեւանի դէմ կազմակերպուող ռազմաքաղաքական կամպանիային: Իրանի դէմ որեւէ կամայական գործողութիւն լրջագոյն սպառնալիք է Հայաստանի ազգային անվտանգութեանը, սա բացայայտ ճշմարտութիւն է, որը կարող է հասկանալ նոյնիսկ ամենամանրագէտ հայաստանցին: Այս իմաստով ապատեղեկատուութիւնը կարգացել է հազար հոգի, իսկ հաւատացել՝ ընդամէնը հարիւրը: Բայց հաշուարկն էլ հէնց այդ հարիւրի վրայ է դրուած, քանի որ եթէ շաբաթ մէկ ապատեղեկատուութիւն տարածուի, ապա ամէն անգամ հարիւր քաղաքացու հիասթափեցնելն ու ապակողմորոշելն արդէն իսկ մեծագոյն նուաճում է: Թիւերն ի հարկէ պայմանական են:

Վերադառնալով տեղեկատուական պատերազմի հիմնախնդրին՝ փաստէք, որ գործ ունենք ոչ թէ ընդամէնը մէկ միջադէպի, այլ՝ շղթայական գործընթացի հետ: Ատրպեյճանը միլիոնաւոր դոլարներ է ծախսում Հայաստանին վարկաբեկելու եւ ազրեսոր ներկայացնելու համար: Բացի այդ Պաքուի կողմից կոնկրետ քայլեր են իրականացւում հայաստանցիներին բարոյալքելու եւ մարտական պատրաստութիւնը կտրելու համար: Իսկ ներսի կեղծ ընդդիմադիրները ջանք չեն ինայում կառավարութեանը հեղինակագրկելու եւ վերջնականապէս անգործունեաց դարձնելու ուղղութեամբ: Ինչպէս տեսնում ենք այս նպատակի կեանքի կոչման ճանապարհին նրանք ոչնչի առջեւ կանգ չեն առնում եւ նոյնիսկ հարուածում են Հայաստանի անվտանգութեանը: Փաստօ-

Հայկական Նոր Զէնքը Գործի Մէջ. Զանգ Թեիրանից

ՅԱԿՈՒ ԲԱՂԱԵԱՆ

2019 թուականը Հայաստանն աւարտեց սպաւորիչ ձեռքբերումներով՝ Երեւան ժամանեց ռուսական նոր արտադրութեան չորրորդ սերնդի Սու 30 ՍՄ բազմաֆունկցիոնալ կործանիչների առաջին խմբաքանակը՝ 4 մեքենայ, հակահրթիռային նորագոյն տեխնիկայ: Դրանք ձեռք են բերուել օդային գերակայութեան ռազմավարութեան շրջանակում: Պաշտպանութեան նախարարը տարեմուտի ուղերձում յայտարարեց, որ Հայաստանը խրամատային պաշտպանութիւնից՝ ինչը վաղ թէ ուշ բերում է կորստի, անցնում է հակառակորդի համար անկանխատեսելի յարձակողական ներուժի քաղաքականութեան, դրանում տեսնելով ռեզիոնալ խաղաղութեան առաքելութեան եւ պատասխանատուութեան իրագործման արդիւնաւէտութիւնը:

Դա Հայաստանի համար առանցքային խնդիր է ոչ միայն ռազմա-քաղաքական, այլ նաեւ տնտեսական, աշխարհ-տնտեսական իմաստով: Հայաստանի խորքային զարգացման գրաւականն այն է, թէ ժամանակի ու տարածութեան առումով որքան խորք կ'ապահովուի անվտանգութեան ու թէկուզ յարաբերական կայունութեան ռեժիմի ապահովման տեսանկիւնից:

Եթէ տարեկերջին Հայաստանի ձեռքբերումը գործնականում երկրի համար մի կողմից օպերատիւ, միւս կողմից էքզիստենցիալ անվտանգութեան խնդրի լուծում էր, ապա տարեկերջին Հայաստանից ոչ հեռու ծաւալուած դրամատիկ ու լարուած իրադարձութիւնները որոշակիորէն նոր նշանակութիւն հաղորդեցին հայկական նոր սպառազինութեանը:

Գեներալ Սոլեյմանիի սպանութիւնը, որ տեղի է ունեցել ԱՄՆ նախագահի ռազմա-քաղաքական որոշմամբ, Մերձաւոր Արեւելքում ստեղծում է նոր իրավիճակ եւ գործնականում ձեւաւորում ռեզիոնալ իրողութիւնների նոր տրամաբանութիւն եւ զարգացման նոր փուլ:

Կասկածից վեր է, որ մերձաւորարեւելեան իրողութիւնները որեւէ կերպ իրենց ազդեցութիւնն են թողնելու նաեւ ռեզիոնալ իմաստով աւելի լայն շրջանակի, ներառեալ Կովկասի վրայ: Ըստ այդմ Հայաստանի համար գերիւնդիր է կառավարել այդ ազդեցութիւնն ու անել ննարաւորը՝ ռիսկերը չէզոքացնելու եւ հնարաւորութիւնները օգտագործելու, այդպիսով Մերձաւոր Արեւելքում ստատուս-քվոյի ձեւաւորման փուլը կովկասում Հայաստանի ձեւաւորած եւ արդէն

րէն Ատրպեյճանի եւ քոչարեանական գոլարդիայի շահերը երբեմն համընկնում են: Երկուսն էլ տեղեկատուական պատերազմ են յայտարարել Հայաստանին, Ատրպեյճանը հէնց հայկական պետութեանը, իսկ քոչարեանականները՝ կառավարութեանը: Մենք ամենեւին էլ չենք փորձում Փաշինեանի կառավարութիւնն ու պետութիւնը նոյնակալանացնել, պարզապէս խնդիրն այն է, որ կառավարութեանը հեղինակագրկելու գործում քոչարեանականները, կարծես թէ, չեն ինայում նաեւ պետութեանը:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

առնուազն քառորդ դար գոյութիւն ունեցող ստատուս-քվոյի ամրապնդման գրաւական դարձնելու համար:

Այդ իմաստով յատկանշական է Սոլեյմանիի սպանութեան ֆօնին ծաւալուած լարուած միջոյրտում իրանի արտգործնախարարի հեռախօսագանգերը Երեւան եւ Պաքու: Արտգործնախարար Զարիֆը հեռախօսագրոյցներ էր ունեցել Հայաստանի եւ Ատրպեյճանի արտաքին գործերի նախարարներ Մնացականեանի եւ Մամեդբարովի հետ:

Թերեւս անկասկած է, որ լարուած իրավիճակում Երեւանի եւ Պաքուի ուղղութեամբ Թեհրանին առաջին հերթին հետաքրքրել է մի հանգամանք՝ թոյլ չտալ իրանի թիկունքում զարգացում, որը կը վտանգի այդ երկրի ազգային շահը: Իսկ այդ իմաստով Թեհրանի համար լրջագոյն սպառնալիքը արցախեան գոտում իրավիճակի ապակայունացումն է: Իրանը լարուած իրավիճակում Երեւան ու Պաքու զանգահարել է թերեւս այդ առնչութեամբ կայունութեան հաստիարացում ստանալու համար:

Այդ համատեքստում էլ փաստացի ստացում է, որ Հայաստանի սպառազինական նոր համալրումը, մասնաւորապէս օդային գերակայութեան շրջանակում Սու 30 բազմաֆունկցիոնալ կործանիչները ինչ որ իմաստով յայտնուում են գործողութեան մէջ, այս դէպքում որպէս զսպող կամ կանխարգելիչ ռազմա-քաղաքական գործոն, որն անկասկած բարձրացնում է ռեզիոնալ կայունութեան աստիճանը:

«ԼՐԱԳԻՐ»



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԳՆԱՎԱԿԵԱՆ
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱՋԱՊԱՂՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բացայայտուած Է Հայաստանի Անվտանգութեան Շահերուն Վնասող Կեղծ Լուրեր Տարածող Օգտատէրը



«Տիանա Յարութիւնեան» ֆէյսպուքեան կեղծ էջը վարողը ձեռքաւարկութեան ընթացքին

Հայաստանի Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը (ԱԱԾ) հրապարակեց հաղորդագրութիւն մը, ուր ըստուած էր. «Հետամուտ ըլլալով տեղեկատուական անվտանգութեան ոլորտին մէջ ՀՀ օրէնադրութեամբ իրեն վերապահուած գործառույթներու եւ լիազօրութիւններու իրականացման, կը շարունակէ բացայայտել համացանցի մէջ՝ պետութեան, հասարակութեան եւ անձի անվտանգութեան վնաս հասցնող կեղծ տեղեկատուութիւն հրապարակող եւ տարածող օգտատէրերուն:

«Մասնաւորապէս, ս.թ. 3 Յունուարին, «Տիանա Յարութիւնեան» ֆէյսպուքեան էջին մէջ տեղեկատուութիւն հրապարակուած էր, որ իբր ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը շնորհաւորած է ԱՄՆ նախագահը՝ Իրանի բարձրաստիճան գինուորականի նկատմամբ կատարուած գործողութեան կապակցութեամբ: Այս կեղծ լուրը տարածում ստացած էր նաեւ ատրպէյճանական եւ իրանական ՋԼՄ-ներուն մէջ: Հրապարակահօրէն՝ ազգային, ռա-

սայական եւ կրօնական թշնամանք յարուցելուն ուղղուած նման բովանդակութեամբ կեղծ լուրերու տարածումը, շահարկումը տեղեկատուական-քարոզչական դաշտին մէջ էական վնաս կը հասցնէ Հայաստանի Հանրապետութեան ազգային անվտանգութեան շահերուն:

«ՀՀ Ազգային Անվտանգութեան Ծառայութեան իրականացուցած հետախուզական միջոցառումներու շնորհիւ պարզուած է «Տիանա Յարութիւնեան» ֆէյսպուքեան կեղծ էջը վարողի ինքնութիւնը: Վերջինս բերման ենթարկուած է եւ պարզաբանում ներկայացուցած՝ իր կատարած գործողութիւններու վերաբերեալ:

«Աւերելոյթ յանցագործութեան դէպքի առթիւ ՀՀ ԱԱԾ քննչական բաժանմունքին ներս յարուցուած է քրէական գործ՝ ՀՀ քրէական օրէնսգիրքի համապատասխան յօդուածի յատկանիշերով, կը կատարուի նախաքննութիւն: «Տիանա Յարութիւնեան» ֆէյսպուքեան կեղծ էջը վարողը ձերբակալուած է:

«Հիւսիս-Հարաւ» Ծրագրի Մեկնարկէն 6 Տարի Ետք Գննապարհի Միայն Մէկ Հատուածը Պատրաստ Է



«Հիւսիս-Հարաւ» ճանապարհի շինարարական ծրագրի մեկնարկէն 6 տարի անց ճանապարհի միայն մէկ հատուածը պատրաստ է՝ բաժին թիւ մէկը: Անոր երկարութիւնը 31 քիլոմէթր է: Վերջին 6 տարին աւելի քան 550 քիլոմէթր ճանապարհէն միայն այդ հատուածը շահագործման յանձնուած է:

Այս ժամանակահատուածին պէտք է աւարտած ըլլար ամբողջ ճանապարհի շինարարութիւնը: Քննչական կոմիտէն ու միւս գե-

րատեսչութիւնները կը փորձեն պարզել ստեղծուած իրավիճակի պատճառը՝ յարուցուած քրէական գործերու շրջածիրէն ներս. մեղադրեալներու թիւը հասած է 18-ի, արդէն 1000-էն աւելի մարդ հարցաքննուած է, նաեւ նախկին պաշտօնեաներ: Քննչական կոմիտէին ներս այս գործի ծաւալներն աննախադէպ կ'որակեն, աւելի քան 23 միլիոն դրամի վնաս պատճառուած է պետութեան՝ նախնական տուեալներով:

Գործող Սահմանադրութիւնը Կ'ամրագրէ Պետութեան Զաւթումը. Արթուր Սարունց

«Արդէն ունենք հաստատուած դատարանական բարեփոխումների ռազմավարութիւնը, որը շնորհիւ արդարադատութեան նախարարութեան այս նոր կազմի՝ շատ կարճ ժամկէտներում դարձաւ իրականութիւն: Կարելոր է նաեւ մարդու իրաւունքների ռազմավարութեան փաստաթղթի ընդունումը, հակաքորուպցիոն ռազմավարութեան ընդունումը», - ամփոփելով 2019 թուականը՝ «Առաջին Լրատուական»-ի հետ զրոյցի ժամանակ ըսած է Հէլսինքեան քաղաքացիական ասամպլեյի Վանաձորի գրասենեակի ղեկավար Արթուր Սարունցը:



Իրաւապաշտպան Արթուր Սարունց

Անոր խօսքով՝ կարելոր փաստաթուղթերն արդէն սեղանին են. «Բայց ես ցանկանում եմ, որ 2020-ին ունենանք նոր Սահմանադրութիւն, որը անցեալում կը թողնի պետութեան զաւթումը սահմանադրական մակարդակում ամրագրող Սահմանադրութիւնը»:

Սարունցը ընդգծած է, որ գործող Սահմանադրութիւնն ընդունուած էր պետութեան զաւթման շարունակականութիւնն ապահովելու համար՝ ի դէմս Սերժ Սարգսեանի՝ նախագահի պաշտօ-

նէն վարչապետի պաշտօնին անցնելու. «Այստեղ անձի փոփոխութիւնը կարելոր է. ով ուզում է լինի՝ այդ Սահմանադրութիւնը պետութեան զաւթման Սահմանադրութիւն է, որովհետեւ իր մէջ ունի «կայուն քաղաքական մեծամասնութիւն» հասկացութիւնը: Այսինքն՝ իր բովանդակութեամբ դա հենց միակուսակցական քաղաքական համակարգի Սահմանադրութիւն է, եւ դա հենց կոչուած է պետութեան զաւթման Սահմանադրութիւն»:

«Պետական Ապարատը Դիմադրում Է Յեղափոխութեանը, Որովհետեւ Վարչապետը Զգնաց Լիւստրացիայի Գննապարհով».
Քաղաքագէտ Ստեփան Գրիգորեան

«Ժողովրդի կողմից ընտրուած իշխանութիւնն ունենք. իշխանութիւնը լեգիտիմ է. սա մեր կարեւորագույն ձեռքբերումն է: Գլխաւոր ձեռքբերումներից է նաեւ այն, որ ժողովուրդն ակտիւ է», - «Առաջին Լրատուական»-ի հետ զրոյցում այս մասին յայտնեց քաղաքագէտ Ստեփան Գրիգորեանը՝ աւելցնելով, որ ակտիւօրէն մասնակցած է յեղափոխութեան եւ այժմ ալ կ'աջակցի իշխանութեանը: Քաղաքագէտի կարծիքով՝ այդ աջակցութեան համար կարելոր է նաեւ խնդիրները ներկայացնելը, որպէսզի ինտելեկտուալ ընդդիմախօսի հարթակը չգրադեցնեն նախկինները, որոնց նպատակը բոլորովին այլ է՝ տապալել յեղափոխական ալիքը:



Քաղաքագէտ Ստեփան Գրիգորեան

Անդրադառնալով դիտարկմանը, որ վարչապետ Նիկոլ Փաշինեանը յայտարարած է՝ պետական ապարատում յեղափոխութիւնը ուժեղ դիմադրութեան է հանդիպել, քաղաքագէտը նշեց. «Յեղափոխութիւնից յետոյ մենք կարող էինք գնալ երկու ճանապարհով՝ առաջին՝ դասական ճանապարհն է, երբ արաւում են կտրուկ քայլեր, այդ թուում նաեւ լիւստրացիա: Օրինակ՝ անհրաժեշտ էր դադարեցնել Սահմանադրական Դատարանի, ոչ լեգիտիմ Ազգային Ժողովի աշխատանքները, լիւստրացիա իրականացնել, քանի որ վերնախաւի մեծ մասը յանցագործ ու կիսաչանցագործ էին: Երբ որ Նիկոլ Փաշինեանը ստանձնեց լիզերի դերը, կարող էր մէկ կարելոր քայլ անել՝ բոլոր ունակ ուժերին հաւաքել իր շուրջը:

Բայց ինչ՞ ճանապարհով գնաց Նիկոլ Փաշինեանը. նա ընտրեց մեղմ ճանապարհ՝ փորձեց փոփոխութիւններ կատարել նախկին հա-

մակարգում, նախկին Սահմանադրութեան եւ նախկին ընտրական օրէնսգրգի շրջանակներում, որոնք գրուել էին նախկին յանցաւոր ռեժիմի կողմից: Փաշինեանը կազմերում ներգրաւեց նախկիններին՝ հրաժարուելով այլ ուժերի ներգրաւել: Նա չգնաց կտրուկ քայլերի, լիւստրացիայ չարեց, չփոխեց Սահմանադրութիւնը, այդ պատճառով էլ բարդութիւններ առաջացան, եւ պետական ապարատը դիմադրում է յեղափոխութեանը:

Սերժ Սարգսեանը պէտք է մեկուսացուէր հասարակութիւնից՝ Սերժի մարդկանց չէս հեռացնում պետական համակարգից, դրա համար էլ բոլորովին են: Նրանք չեն կարող են թարկուել նոր տրամաբանութեանը, գրեթէ բոլոր ոլորտներում ձախողում է տիրում: Ես ցանկանում եմ յաջողութիւններ կառավարութեանը. պէտք է որոշել՝ ուր ենք գնում, դեռեւս ուշ չէ լիւստրացիա անցկացնելու համար»:

ԼՈՒՐԵՐ

Սոլեյմանիի սպանութեան ճեղքատեմի Կապուած՝ Զայաստանը Դրսելորում Ե Զաւասարակշռուած Դիրքորոշում



«Սոլեյմանիի սպանութեան թեման իրանական կողմը փորձում է օգտագործել նաեւ արտաքին քաղաքական հարթակներում՝ ԱՄՆ-ի հետ դիւանագիտական եւ քարոզչական առճակատման համատեքստում, իսկ պաշտօնական Երեւանի արձագանքը ստեղծուած նուրբ իրավիճակին հաւասարակշռուած է եւ համաձայն դիւանագիտական էթիկայի կանոններին», այս մասին «Առաջին Լրատուական»-ի թղթակցի հետ զրոյցում նշեց իրանագետ Ժաննա Վարդանեանը՝ մեկնաբանելով՝ Յունուարի 3-ին Բաղդադում ամերիկեան յատուկ գործողութեան հետեւանքով իրանցի բարձրաստիճան գորահրամանատար Ղասեմ Սոլեյմանիի սպանութիւնից յետոյ իրան-ԱՄՆ յարաբերութիւնների լարուածութեան եւ դրա հետ կապուած Հայաստանի դիրքորոշման հարցը:

Ըստ փորձագէտի՝ Սոլեյմանիի սպանութիւնից յետոյ ԱՄՆ-ի դէմ դիւանագիտական, քարոզչական առճակատման համատեքստում իրանական կողմնակալութիւնը քայլեր է իրականացնում նաեւ արտաքին քաղաքական ոլորտում՝ մասնաւորապէս միջազգային կառուցներում եւ մի շարք երկրների հետ երկկողմ շփումների ուղղութեամբ: Այս օրերին ԱԳ նախարար Մոհամադ Ջաւադ Չարիֆը մի շարք հեռախօսազրոյցներ է ունեցել Հայաստանի, Ատրպէյճանի, Թուրքիայի, Չինաստանի, Ռուսաստանի եւ այլ պետութիւնների՝ իր գործընկերների հետ: Նրա գործընկերները հեռախօսազրոյցների ընթացքում քննարկել են տարածաշրջանում ստեղծուած լարուածութիւնը, իսկ որոշներն էլ ցաւակցութիւն են յայտնել Սոլեյմանիի մահուան կապակցութեամբ», - նկատեց Վար-

դանեանը: Ինչ վերաբերում է Հայաստանի դիրքորոշմանը, ապա, իրանագետի բնորոշմամբ, այն նման չափազանց նուրբ իրավիճակում այն զուսպ է եղել ու հաւասարակշռուած: «Թէ՛ իրանը, թէ՛ Միացեալ Նահանգները Հայաստանի համար շատ կարեւոր բարեկամ եւ գործընկեր պետութիւններ են, ու Երեւանը ձգտում է երկուսի հետ յարաբերութիւններն էլ բարձր մակարդակի վրայ պահել՝ ձգտելով պահպանել հաւասարակշռութիւն: Նշուածի համատեքստում էր նաեւ միջազգային առնչութեամբ Հայաստանի ԱԳՆ-ի արձագանքը», - ըստ Ժաննա Վարդանեանը:

Չարիֆ-Մնացականեան հեռախօսազրոյցի բովանդակութեան մասով՝ փորձագէտը նշեց՝ չափազանց կարեւոր է, որ հայկական կողմը պահպանել է դիւանագիտական էթիկայի կանոնները, ի տարբերութիւն, օրինակ, հարեւան Ատրպէյճանի, ներկայացնելով, թէ ում կողմից է նախաձեռնուած եղել հեռախօսազրոյցը: Դրա ընթացքում Հայաստանի ԱԳ նախարարը ՀՀ կառավարութեան անունից ցաւակցութիւն է յայտնել իրանի կառավարութեանը եւ ժողովրդին Սոլեյմանիի մահուան կապակցութեամբ: Առաջին հայեացքից՝ սակարոգ է դիտուել որպէս աջակցութիւն, բայց իրականում Մնացականեանը ցաւակցել է պաշտօնեայի մահուան կապակցութեամբ՝ անկախ նրա անձի եւ գործունէութեան նկատմամբ վերաբերմունքից:

Միւս կողմից, հայկական կողմը անհանգստութիւն է յայտնել առաջացած լարուածութեան վերաբերեալ՝ առանց որեւէ կողմին մեղադրելու կամ որեւէ մէկին սատարելու:

ՀՀ Անճնագրով Առանց Վիզայի Կարելի Ե Այցելել 62 Երկիր

Հայաստանը 2020 թուականին Henley & Partners ընկերութեան անճնագրերու վարկանշային ցուցակին մէջ զբաղեցուցած է 81-րդ տեղը, Հայաստանի քաղաքացիներն առանց վիզայի կրնան այցելել 62 երկիր: «Արմէնիա»-ի հաղորդմամբ՝ այս մասին նշուած է ընկերութեան կայքին մէջ:

Առաջին տեղը զբաղեցուցած է Ճափոնը, որուն քաղաքացիներն առանց վիզայի կրնան այցելել 191 երկիր, երկրորդ տեղը կը գրաւէ Միւնխիւրը՝ առանց վիզայի 190 երկիր մուտքի հնարաւորութեամբ: Երրորդ տեղը՝ Հարաւային Քորէան եւ Գերմանիան են, որոնց քաղաքացիները առանց վիզայի կրնան այցելել 189 երկիր:

Հայաստանի հարեւան վրաստանը վարկանշային ցուցակին մէջ 53-րդն է՝ աշխարհի 116 երկիր առանց վիզայի մուտքի հնարաւորութեամբ:

Հայաստանը 2019 թուականի երրորդ եռամսեակին Henley & Partners ընկերութեան անճնագրերու



վարկանշային ցուցակին մէջ զբաղեցուցած էր 84-րդ տեղը՝ առանց վիզայի 60 երկիր այցելելու հնարաւորութեամբ:

Վարկանշային ցուցակը կազմուած է Օդային փոխադրութեան միջազգային միութեան տուեալներու բացառիկ հիմքի վրայ:

Հայաստան- Իրան Թռիչքները Պիտի Շարունակուին

ՀՀ Քաղաքացիական օդադնացութեան կոմիտէն մշտական կապի մէջ է EASA-ի (European Aviation Safety Agency), Եւրոպական հսկողութեան (European Organization for the Safety of Air Navigation), ինչպէս նաեւ Ուքրանիոյ եւ Ռուսաստանի օդադնացութեան իշխանութիւններուն հետ, ըսուած է կոմիտէի յայտարարութեան մէջ:



Քաղաքացիական օդադնացութեան կոմիտէն յայտնած է, որ դեռ չկայ իրանի օդային տարածքով թռիչքները դադարեցնելու որեւէ հիմք: Միեւնոյն ժամանակ նշած են, որ Քաղաքացիական օդադնացութեան կոմիտէն կը շարունակէ հետեւիլ իրադարձութիւններու յետագայ զարգացման եւ հանրութեան մշտապէս պիտի իրազեկէ իր որոշումներու մասին:

«Armenia Airways» օդանաւային ընկերութեան կողմէ իրականացուող Երեւան-Թեհրան յաջորդ թռիչքը կը նախատեսուի Յունուար 10-ին: Իսկ «UR» օդանաւային ընկերութեան կողմէ իրականացուող էրպիլ-Երեւան-էրպիլ թռիչքը կը նախատեսուի Յունուար 12-ին: Թռիչքներու փոփոխութեան պարագային Քաղաքացիական

օդադնացութեան կոմիտէն պիտի տեղեկացնէ մինչ թռիչքներու իրականացումը:

Յիշեցնենք, որ «Ուքրանիոյ միջազգային օդադնացութեան ուղիներու» օդանաւը կործանուած է Թեհրանի «Իմամ Խոմէյնի» օդակայանէն թռիչք կատարելու ժամանակ: Ըստ ճշդուած տուեալներու՝ օդանաւին մէջ եղած են 167 ուղեւորներ եւ անձնակազմի 9 անդամներ, ամենայն հաւանականութեամբ՝ անոնք բոլորը զոհուած են:

Որպէս օդանաւային աղետի պատճառ նշուած է արհեստագիտական անսարքութիւնը:

Ըստ նախնական տուեալներու, օդանաւի կործանման հետեւանքով զոհերու ցանկին մէջ Հայաստանի քաղաքացիներ չկան:

Համախառն Ներքին Արդիւնք

Շարունակուած էջ 1-էն

առաջին տեղը պիտի զբաղեն էսթոնիան՝ 24 հազար 800 տոլար ցուցանիշով, վերջին հորիզոնականին Տաճիկստանը՝ 910 տոլարով:	
էսթոնիա	\$24 800
Լիթվա	\$20 350
Լաթվիա	\$19 100
Ռուսաստան	\$11 310
Ղազախստան	\$9 670
Թուրքմենստան	\$8 990
Պելաուս	\$6 740
Հայաստան	\$4 760
Ատրպէյճան	\$4 720

Վրաստան	\$4 630
Ուքրանիա	\$3 880
Մոլտովա	\$3 470
Ուզպէքստան	\$2 090
Ղրղզստան	\$1 340
Տաճիկստան	\$910
Նշենք նաեւ՝ եթէ Հայաստանն առաջ պիտի անցնի Ատրպէյճանէն ու վրաստանէն, ապա տակաւին պիտի գիջի Թուրքիոյ, ուր մէկ շունչին ինկող համախառն ներքին արդիւնքը (ՀՆԱ) 2020 թուականին պիտի կազմէ 9680 տոլար, եւ՝ իրանին, ուր այդ թիւը 5500 տոլար պիտի ըլլայ:	

Լարուածութիւն Հայ-Ատրպէյճանական Սահմանին

Ատրպէյճանական Կողմը Յայտնած Ե Ձոհի Մասին

ՀՀ պաշտպանութեան նախարարի մամուլի քարտուղար Արծրուն Յովհաննիսեանը կը յայտնէ. «Տաւուշի հատուածում ատրպէյճանական կողմը փորձել է ճարտարապետական աշխատանքներ իրականացնել առաջնագծում: Հայկական կողմը նախագրուշացնող կրակ է բացել»:

Ատրպէյճանի պետական սահմանապահ ծառայութիւնը հաղորդագրութիւն տարածած է, նշելով, որ Ղազախի շրջանի ուղղութեամբ «հայկական կողմէն դիպուկահարի կրակոցէն» սպանուած է սահմանապահ զինծառայող Ֆարգալի Ֆարգալիեւը: Ըստ ատրպէյճանական կողմի՝ դէպքը տեղի ունեցած է Յունուար 7-ին, ժամը 14:56-ին:

Հայաստանի Զինուած Ուժերու Ղեկավար Կազմը Քննարկած Է Մերձաւոր Արեւելքի Տարածաշրջանին Մէջ Ստեղծուած Իրավիճակը

Հայաստանի Զինուած ուժերու ղեկավար կազմը Պաշտպանութեան նախարարութեան ներս հրահրուած խորհրդակցութեան ժամանակ քննարկած է Մերձաւորարեւելեան տարածաշրջանին մէջ վերջին օրերուն ստեղծուած իրավիճակը:

Պաշտպանութեան նախարարութեան խօսնակ Արծրուն Յովհաննիսեանը Ֆէյսպուքի իր էջին տեղեկացուցած է, որ այդ ուղղութեամբ տրուած են յատուկ ցուցումներ:

Նոյն առիթով խորհրդակցութիւն հրահրած էր Արտաքին գործոց նախարարութիւնը:

Արտաքին գործոց նախարարութիւնն աւելի ուշ յատարարութիւն տարածեց, թէ պաշտօնական երեւանը խորապէս մտահոգուած է իրանցի գորավար Քասէմ Սոլայմանիի սպանութեան յաջորդած Մերձաւորարեւելեան տարածաշրջանի լարուածութեամբ:

Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան տարածած հաղորդագրութեան մէջ մասնաւորապէս ըսուած է, որ անոնք կրնան աւելի վտանգել տարածաշրջանային խաղաղութիւնը եւ ապակայունացնել իրավիճակը Մերձաւոր Արեւելքի մէջ եւ անկէ դուրս: Արտաքին գերատեսչութիւնը շեշտած է՝ Հայաստանը հանդէս պիտի գայ բացառապէս խաղաղ միջոցներով իրադրութեան լիցքաթափման գիրքերէ:

«Հայաստանը կը շարունակի սերտօրէն համագործակցել իր բոլոր գործընկերներին հետ՝ ի շահ տարածաշրջանային կայունութեան եւ անվտանգութեան», - նշուած է հաղորդագրութեան մէջ:

«Սրանք զարգացումներ են, որոնց վրայ Հայաստանի Հանրապետութիւնը այդ պահի դրութեամբ որեւէ կերպ ազդել չի կարող: Մենք պարզապէս պէտք է հետեւենք զարգացումներին եւ փորձենք, եթէ հնարաւորութիւն լինի, մեր մասով յորդոր, կանխագոյնացում, կանխարգելում իրականացնել», - ըսած է իրանագէտ

Գոհար Իսքանտարեանը:

Իսքանտարեանը համոզուած է՝ այս պահին որպէս այդպիսին որեւէ սպառնալիք չկայ, յատկապէս Հայաստանին: Իրանագէտը լիջեցուցած է՝ Իրան-Միացեալ Նահանգներ յարաբերութիւններուն մէջ նման իրավիճակները նորութիւն չեն:

«Գրեթէ 40 տարի է նրանք այսպիսի լարուած իրավիճակում են: Ի հարկէ, ժամանակ առ ժամանակ սրացում է տեղի ունենում, յարաբերութիւնների սրացում է լինում, վատացում է լինում, լինում են տարիներ, որ մի փոքր աւելի հանդարտ է լինում իրավիճակը, եւ սա հիմնականում կախուած է լինում՝ Միացեալ Նահանգների իշխանութեան գլուխը հանրապետականներն են կանգնած, թէ դեմոկրատներն են կանգնած: Սրանից բաւական տարբերութիւն է լինում եւ զարգացումներն էլ ըստ այդմ փոփոխութեան են ենթարկուած», - նշած է իրանագէտը:

Իրավիճակը տարածաշրջանին մէջ պայթուածութան պէտք է կամ ալ պատերազմի հաւանականութիւնը շատ քիչ է, համոզուած է «Ազատութեան» իրանական ծառայութեան լրագրող Ռուբիկ Մինասեանը: Վերջինս ուռնացուած կը համարէ մասնաւորապէս համացանցի հայկական տիրոջութիւն մէջ ԱՄՆ-Իրան յարաբերութիւններու վերաբերեալ որոշ մեկնաբանութիւնները, թէ երկու երկիրներու յարաբերութիւններու սրացումը բացասաբար կ'ազդէ Հայաստանի վրայ:

«Ե՛լ Իրանի կողմից պատերազմի գնալու որեւէ նախապայման, որեւէ տնտեսական նախապայման եւ քաղաքական չկայ, ե՛լ Ամերիկայի կողմից չկայ: Ինչ վերաբերում է Քասէմ Սոլայմանիի վերացմանը կամ ահաբեկմանը, դա ինչպէս Թրամփն է ասել, աւելի շուտ պէտք է արուէր: Այսինքն՝ տարածաշրջանն անկայուն դարձնող ամենակարեւոր անձնաւորութիւններից մէկը վերացել է, էդպէս պէտք է մօտենանք», - ըսած է Ռուբիկ Մինասեանը:

«Տօնէք Միասնաբար» Լիբանանի ՀԿԲՄ-ի Ամանորեայ Նուէրը Կարիքաւոր Ընտանիքներու



Լիբանանի տաղնապահար իրավիճակին մէջ եւ տօնական օրերու առիթով, Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան վարչութիւնը, հաւատարիմ մնալով կարիքաւորներուն օգնութեան ձեռք մեկնելու իր առաքելութեան, որոշեց իր նպաստը բերել կարիքաւոր ընտանիքներու օժանդակելու եւ անոնց օգտակար դառնալու աշխատանքին մէջ: Առ այդ, վարչութիւնը կազմակերպեց ուտեստեղէնի նպաստահաւաքի արշաւ մը, ունենալով «Տօնէք Միասնաբար» կարգախօսը:

Կարիքաւոր հայ ընտանիքներուն օգտակար դառնալը իր տարրական պարտականութիւններէն մին համարելով, Հ.Կ.Բ.Մ.-ը իր կրթական եւ բժշկա-ընկերային ծառայութիւններուն աւելցեալ, Ամանորի եւ Սուրբ Ծննդեան տօներու նախօրեակին զանազան տեսակի ուտեստներ պարունակող սնտուկ-

ներ պատրաստեց ու բաշխեց Նոր Հաճնոյ եւ գրեթէ բոլոր հայահոծ թաղամասերուն մէջ բնակող կարիքաւոր ընտանիքներուն, գոնէ այդ ձեւով մասամբ թեթեւցնելու համար անոնց բեռը լիբանանեան տնտեսական այս տաղնապալի օրերուն:

Բարերար եւ բարեգործ հայրենակիցներու նիւթական մասնակցութեամբ, Ուրբաթ, 27 Դեկտեմբեր 2019-ին, Նոր Հաճնոյ ՀԿԲՄ-ի դարմանատան մէջ բաշխուեցան պատրաստուած սնտուկները, որպէսզի այդ հայ ընտանիքները Նոր Տարին դիմաւորեն սիրովուած հոգիով եւ ուրախ սրտով:

Վարձքը կատար բոլոր անոնց, որոնք մասնակից դարձան «Տօնէք Միասնաբար» արշաւին եւ ուրախացուցին հայ ընտանիքներ: ՀԿԲՄ-ի վարչութիւնը կը շնորհաւորէ բոլորին Նոր Տարին եւ Ս. Ծնունդը:

Յովհաննէս Պալայեանի Յիշատակին

Շարունակուած էջ 1-էն

օրով հայրենիքի մէջ տիրող իրավիճակը կը մտահոգեր զինքը ու ան չէր վարանէր հրապարակաւ քննադատելէ հոն տիրող ընկերային անարդարութիւնը, որ հայրենաբնակ մեր ժողովուրդը կը մատնէին յուսալքումի ու մղէին արտագաղթի: Այս երեւոյթները ու նաեւ խաղաղ ցուցարարներուն դէմ բռնի ուժի կիրարկումը մղեցին զինք հրապարակաւ հրաժարելու Քոչարեանի կողմէ իրեն տրուած շքանշանէն:

2018-ի Ապրիլին, երբ Հայաստանի մէջ ծայր կ'առնէր համաժողովրդային շարժումը ու Կլէմտիլի մէջ տեղի կ'ունենային զօրակցական հաւաքներ, Պալայեան ոչ միայն ամեն օր ներկայ էր Քաղաքապետարանի առջեւ ընթացող ցոյցերուն, այլ իր ելոյթներով կը վստահեցնէր ժողովուրդին, որ այս անգամ յաղթանակը մօտալուտ է ու Հայրենիքին կը սպասեն

աւելի պայծառ օրեր: Պալայեանի ցանկութիւնները իրականութիւն դարձան ու թաւշեայ յեղափոխութեան յաղթանակով իրականացան անոր վերջին երազանքները եւս:

Կուսակցական մը չըլլալով հանդերձ, Պալայեան հաւատացողն է ՀՀ Կուսակցութեան ու «Սմսիս» շաբաթաթերթի առաքելութեան, դառնալով անոնց ամենէն քերտ համակիրներէն մէկը: Մեր շրջանակի կազմակերպած գլխաւոր միջոցառումներուն ան կը բերէր իր կարեւոր ներդրումը մեծապէս նպաստելով անոնց յաջողութեան:

Հակառակ իր յառաջացած տարիքին Պալայեան շարունակեց իր գործունէութիւնը նոյն թափով, հաւատքով ու նուիրումով: Անցնող տարին եղաւ վճռական իր համար: Երկար ժամանակ ան գամուած մնաց հիւանդանոցի անկողինին: Շատեր արդէն իսկ հաշտուած էին անխուսափելիին հետ:

Հայաստանի Մէջ Նշուեցաւ Ծննդեան Տօնը

Շարունակուած էջ 1-էն

տօն: Եւ այդ ժամանակներէն ի վեր միայն Հայ Առաքելական Եկեղեցին է, որ կը շարունակէ Յունուար 6-ին նշել Ծննդեան տօնը: Իսկ

Մկրտութեան տօնը, որ կը խորհրդանշէ Յիսուսի մկրտութիւնը Յորդանան գետի մէջ Յովհաննէս Մկրտիչի կողմէ, Կաթողիկէ եկեղեցին ալ կը շարունակէ նշել Յունուար 6-ին:

Սակայն, ան տակաւին ունէր անաւարտ ծրագիրներ: Բժիշկներու կանխատեսումներուն հակառակ, Պալայեան դարձեալ ոտքի ելաւ ու կարողացաւ կազմակերպել ու յաջողութեամբ պսակել Հայաստանի ծնողագուրկ եւ հաշմանդամ երեխաներու ֆոնտի տարեկան թելեթոն-հանգամանակութիւնը: Վերադարձաւ հեռատեսիլի իր հաղորդումներուն ու հասցուց ներկայ գտնուելու Սեպտեմբերին Վարչապետ Նիկոլ Փաշինեանի Լոս Անճելըս կատարած այցելութեան

միջոցառումներուն ու ոգեւորուեցաւ այդ բոլորով:

Կարճ ժամանակ ետք Պալայեանի դիւրաբէլ մարմինը ստիպեց զինք վերադառնալ հիւանդանոց, ուր ան իր աչքերը փակեց Դեկտեմբերի 29-ին:

Այսպիսով, Լոս Անճելըսի Հայտնիքը կորսնցուց նուիրեալ ու անխոնջ ազգային, հասարակական ու մշակութային վաստակաւոր գործիչ մը, որ իր մեկնումով ետին կը ձգէ մեծ բաց մը:

«Ազատ Արցախ»-ի Հարցազրույցը Պեյրուքի «Արարատ» Օրաթերթի Գլխավոր Խմբագիր Անի Եփրեմեանին Հետ «Երազս Է. Պահել Ու Պահպանել Սեր Ունեցածը՝ Արժանապատուութեամբ»



«Ազատ Արցախ»-ի հիւրասրահում Պեյրուքի «Արարատ» օրաթերթի գլխավոր խմբագիր Անի Եփրեմեանին է: Սփիւռքահայ լրատուագրողուհի Անի Եփրեմեանը, որը 82-ամեակը՝ այդուհետեւ եւս շարունակելու է ազգային ինքնութեան ու մայրենի լեզուի պահպանման, հայ մշակույթի տարածման ու զարգացման անխնայ մշակի իր առաքելութիւնը: Հայրենիքից հեռու, բայց հայրենիքով ապրող օրաթերթի էջերում միշտ ներկայ է Արցախը՝ որպէս մեր հաւաքական ուժի հզօր պատուար:

Անի Եփրեմեանը գլխավոր խմբագրի աշխատանքին գուգահեռ վարում է հետազոտական կեանք՝ իբրեւ տեղի «Նոր Սերունդ» Մշակութային Միութեան ատենապետ: Նա նաեւ երեք գաւազանների մայր է: Այս ամէնի դաշնութեամբ են ստեղծուել կեանքի իր կանոնները, որոնք օգնում են չընկրկել դժուարութիւններին:

Անի, տարեմուտեան մեր գրույցը պէտք է ծաւալուի Ձեր անհատականութիւնը ներկայացնող երեք՝ գլխավոր խմբագիր, միութեան ատենապետ, ընտանիքի մայր բաժանարարների շուրջ: Սկսենք «Արարատ»-ից: Ինչպիսի՞ն էր անցնող տարին աշխարհասփիւռ հայութեան շրջանում մեծ մասսայականութիւն գտած պարբերականի համար:

«Արարատ» օրաթերթը մինչեւ օրս հաւատքով ու վճռակամութեամբ կը շարունակէ իր ազգանուէր առաքելութիւնը: Սփիւռքի մէջ հայ օրաթերթը սովորական հասկացողութեամբ օրաթերթ չէ, պարզապէս լուրերու արձագանգը հանդիսացող: Հայ օրաթերթը իր էութեամբ ու նպատակով առաքելութիւն է:

Անցնելով երկար ճանապարհ՝ «Արարատ» օրաթերթը անցնող տարի եւս շարունակեց իր դերը, զարգացնելով տասնամեակներու ընթացքին կուտակուած հարուստ փորձն ու աւանդույթները, նուիրուած թերթի հիմնական նպատակին՝ ծառայել հարազատ ժողովուրդին:

Անցնող տարին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ հռչակեց «Հայ Մամուլի» տարի, հետեւաբար յատկանշական տարի մըն էր հայ մամուլի ծառայողներուն համար:

«Արարատ» իր մասնակցութիւնը բերաւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կազմակերպած «Հայ Մամուլի Համաժողովին», ուր ներկայ էին աշխարհասփիւռ

հայ մամուլի գործիչներ: Այստեղ կ'ուզեմ նշել, որ «Արարատ»-ի կայքէջը՝ www.araraddaily.com, ունի բազմաթիւ ընթերցողներ աշխարհի չորս կողմերէն:

Այս վերջին շրջանին, սակայն, Լիբանանի վերջին իրադարձութիւններէն ետք, թերթը կը դիմագրաւէ նիւթական ծանր դժուարութիւններ, երկիրը եւ դրամատնային համակարգը ամբողջութեամբ անշարժացած է: Սակայն շնորհիւ օրաթերթի շուրջ համախմբուած բարեկամներու եւ բարերարներու օժանդակութեան մենք կը շարունակենք մնալ պատենէլի վրայ:

«Պեյրուքում բազմաժամանակ ազգայնական ծրագրեր իրականացնող «Նոր Սերունդ» Մշակութային Միութիւնը, բացի աւանդական դարձած գեղարուեստական համայնքների ու խմբերի տարեկան-հաշուետու համերգներից, միշտ որեւէ նորոյթ է յաւելում իր տարբերութեանը:

Ինչո՞վ առանձնացաւ անցնող տարին:

«Նոր Սերունդ» Մշակութային Միութեան նպատակը բոլոր ժամանակներուն եղած է հայ մշակույթի միջոցով վառ պահել հայ ինքնութիւնը եւ փոխանցել նորահաս սերունդներուն մեզի աւանդուած հարստութիւնը: Անցնող տարի, ինչպէս կ'ըսէք՝ ունեցանք մեր հերթական ելույթը, եւ անոր կողքին մասնակցեցանք լիբանանեան բազմաթիւ փառաստուներու: Արժէ առանձնացնել մեր մասնակցութիւնը Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. կաթողիկոսի կազմակերպած միջմիութենական պարի փառաստին, որ տեղի ունեցաւ կաթողիկոսութեան ամառնային նստավայր՝ Պիքֆայայի մէջ:

Այժմ անդրադառնանք երեք երեխաների մօր, հայկական աւանդական ընտանիքի տէր հրաշալի հա-

յուհու Ձեր կերպարին: Ե՛ւ մայրական, ե՛ւ հայրական կողմից սերունել էք եղեռնից մազապուրծ՝ Պեյրուքում ապաստանած հայ որբերի ստեղծած ընտանիքներից: Ի՞նչ էք ժառանգել նրանցից, ի՞նչ են պատգամել նրանք իրենց գաւակներին:

«Իւրաքանչիւր մարդ իր ընտանիքի հայելին է» խօսքը շատ կարեւորութեամբ կ'ընդգրծեմ ու կ'ուզեմ պարզել, որ այսօր եթէ ես կը սիրեմ ու նուիրուած եմ հայ մշակութային գործունէութեան, ապա այդ բոլորին արմատները իմ մէջս խարսխուած են փոքր տարիքէս: Իմ հօրական տունս մշակույթ կը բուրդէր, ընտանեկան մեր հաւաքները գերազանցապէս մշակութային ձեռնարկներ էին: Չկար Հայաստանէն ժամանած հայ արուեստագէտներ, ինչպէս՝ Սիլվա կապուտիկեան, Գէորգ Էմին, Յովսէփ Շամամեան, մարզիկ կամ գրօսաչըջիկ, որ հօրս հոգածութեան եւ սիրոյ արտայայտութեան շարժանանար: Պատիւը ունեցած ենք նաեւ ոմանց անձամբ տեսնելու մեր տունը:

Հաւաքական ուրախութիւնը եւ հաւաքական յաջողութիւնները միշտ գնահատող ծնողքս ինձի փոխանցած է հաւաքականին վրայ շեշտը դնել եւ միայն այդպէս գտնել անձնականին բաւարարութիւնը:

Այս դարուս երիտասարդութիւնը համախմբել եւ մշակութային կամ քաղաքական որեւէ գործունէութիւն ծաւալելը պատասխանատուութիւն եւ յանձնառութիւն կը պահանջեն: Արթուն, քրննական եւ մասնագիտական միտքով պատասխանուած երիտասարդն իր անդամակցած միութեան կը հաւատայ առաւելաբար, երբ ան իր շուրջը գտնէ իրեն փոխանցուած արժէքներով ապրող ու տառապող անձեր: Ծնողք կամ ղեկավար պարտինք ականջալուր ըլլալ մեր նոր

սերունդներուն եւ վստահինք անոնց երազներուն:

Այսպէս, կը հաւատանք, որ գործի ընդմէջէն կարելի է փոխանցել լաւագոյն դաստիարակութիւնը:

Արցախը Պեյրուքի «Արարատ» օրաթերթի սեւեռուն հայեացքի ներքոյ է, ամէն մի յաջողութեանը թերթն անմիջապէս ուրախութեամբ է արձագանգում: Ի՞նչ լուրեր էք ակնկալում Արցախից:

Արցախի իւրաքանչիւր յաջողութեան մասին «Արարատ» օրաթերթին արձագանգելը կուգայ հաստատելու, որ աշխարհասփիւռ հայութիւնը իր հպարտութեան բաժակը կը լեցնէ ձեր սիրանքներով: Արցախցի ժողովուրդին կեանքի բարօրութիւն, Արցախի երկնքին խաղաղութիւն, Արցախի հողին առատ բերք, ազգային եւ միջազգային հարթակներու վրայ նոր ձեռքբերումներ կը մաղթեմ եւ վերջապէս Արցախի եւ Սփիւռքի միջեւ աւելի սերտ ու անմիջական կապերու ամրապնդում:

Արցախցիներիս երազանքը մեր հայրենիքից դէպի երկիր մոլորակը ձգուող յարատեւ խաղաղութիւնն է: Իսկ ի՞նչ երազանք ունի Անի Եփրեմեանը:

Մեր երկիրքը այսօր մութ է եւ հեռուն՝ պղղտոր, բայց եւ այնպէս միշտ ալ վառ յոյսով եւ հաւատքով կը սպասենք նորին: Իբրեւ լիբանանահայ՝ շրջանցած ենք պատերազմական դժուար ու ծանր տարիներ, իբրեւ հայ՝ յաղթանակած ու փրկած ենք Արցախ աշխարհը, երազս է պահել ու պահպանել մեր կերտածը, ունեցածը՝ արժանապատուութեամբ ու պահուցելով լաւագոյն պատասխանատուութեամբ:

Շնորհակալութիւն, Անի, թող նոր տարին արգասաբեր լինի իւրաքանչիւրիս համար:

ՆՈՒԱՐԴ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ
Արցախ

«Համշերը հայկական ձեռագրերում եւ Օսմանեան աշխարհագիր մատենաներում»

ԹԻՄԱՅԻ ՄԵՐՈՐԵԱՅ ՊԱՏՈՒՄՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՏԱՊԿՈՒՆԵՐԸ

Hamshen in Armenian Manuscripts and Ottoman Registers
The Current Historical-Political Manipulation of the Subject

Լուսինէ Սահակեան
Lusine Sahakyan
Associate Professor of Turkic Studies & PhD in Philology

Altadena-Pasadena Հինգշաբթի, Յունուար 23, 2020 Երեկոյեան ժամը 7:30-ին
Thursday January 23, 2020 7:30 pm at Tekeyan Cultural Center
1901 Allen Ave., Altadena, CA 91001

Glendale Ուրբաթ, Յունուար 24, 2020 Երեկոյեան ժամը 7:30-ին
Friday January 24, 2020 7:30 pm at Armenian Society of Los Angeles
117 S. Louis St. Glendale, CA 91205

Հրաւեր-Մուտքը ազատ-հիւրասիրութիւն
Invitation-Free Admission-Hospitality

Իրաքահայերու Ընտանեկան Միութեան Շաբաթօրեայ Վարժարանի Տօնական Փառաշուք Հանդէսը

Յարատեւող ճիգին առջեւ Չկայ բան մը որ դիմանայ, Դժուարը դիւրին, Աճկարելին հնարաւոր կը դառնայ: Ռէթնա Պէրպլեան



ԽԱՉԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ

Նոր Տարուան եւ Քրիստոսի մեծախորհուրդ եւ սքանչելի ծննդեան տօներուն առիթով, Շաբաթ 21 Դեկտեմբեր, առաւօտեան ժամը 9:30-ին Կլենտէյլի արուեստի վեհաշուք կեդրոնին մէջ (324 N. Orange St. Glendale), տեղի ունեցաւ այս վարժարանի աւանդական ճոխ եւ խորիմաստ հանդէսը:

Այդ օր, դպրոցի ծնողներէ, հիւրերէ, շրջանաւարտներէ, սաներէ եւ անցեալի ուսուցիչներէ բաղկացած յորդանոս բազմութիւն մը՝ ողողուած էր շատ գեղեցկօրէն զարդարուած սրահը:

Սրահի մուտքին դրուած էր մեծ պէսպէսուն զարդերով ակնահաստի տօնական ծառ մը, իսկ ներսը, բեմին վրայ, դարձեալ զարդարուած եւ տօնական զարդերով եւ Յիսուսի ծննդեան մսուրը ներկայացնող նորածինի սնարը դրուած էր:

Չեռնարկը իր օրհնաբեր հովանաւորութեամբ կը պատուէր Թեմիս Բարեջան Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, նորին սրբազնութեան կը ներկայացնէին Թեմիս Շաբաթօրեայ վարժարաններու մարմնի նախագահ՝ Դոկտ. Էլի Անդրէասեան եւ նոյն մարմնի անդամ՝ Տիկ. Հուրի Քէջումեան:

Դպրոցի կամաւոր ու թանկագին ուսուցչուհիները, գլխաւորութեամբ համակ նուիրում ու ժրպարտութեամբ Անահիտ Թովմասեան-Խաչատուրեանի մեծ ճիգ եւ աշխատանք տարած էին այս հանդէսով, ներկաներուն անմոռանալի եւ յիշարժան պահեր պարգեւելու համար:

Տնօրէնուհիին բացման ջերմ եւ սիրալիւր խօսքերով ողջունեց ներկաները եւ հրաւիրեց Առաջնորդ՝ Սրբազան Հօր՝ ներկայացուցիչը, մեծավաստակ կրթական մշակ Դոկտ. Էլի Անդրէասեանին եւ Տիկ. Հուրի Քէջումեանին իրենց սրտի խօսքերով սկսելու համար հանդէսը:

Դոկտ. Անդրէասեան բոլոր ներկաներուն փոխանցեց Առաջնորդ Սրբազան Հօր՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի օրհնութիւնները բոլոր ներկայ ծնողներուն, աշակերտներուն եւ դպրոցի պատասխանատուներուն: Տիկ. Անդրէասեան մեծապէս գնահատեց դպրոցի պատասխանատուները, աշակերտութիւնը, անոնց ծնողները եւ իրաքահայերու Ընտանեկան Միութեան

ղեկավարները, որ 40 տարի անդադար կը տանին հայապահպանման այս սուրբ գործը: Նմանապէս Տիկ. Հուրի Քէջումեան իր հերթին շնորհակտութիւնով դպրոցի ուսուցչուհիները, տնօրէնութիւնը եւ պատասխանատուները այս կրթական աշխատանքը տանելու համար, բոլոր ներկաներուն Նոր Տարին եւ Մ. Ծնունդը շնորհակտութեամբ:

Պաշտօնական այս խօսքերէն ետք, սկսան աշակերտութեան կատարումները: 90 աշակերտ-աշակերտուհիներ երկու խումբերու բաժնուած իրենց ուսուցչուհիներու առաջնորդութեամբ եւ գեղարուեստական բաժնի պատասխանաւոր՝ Տիկ. Մարիէթա Անասեանի ղեկավարութեամբ 36 համաներէ բաղկացած յայտագիր մը ներկայացուցին արժանանալով ներկաներուն որոտընդոստ եւ ջերմ ծափահարութեանց: Արդարեւ խօսք եւ բառ չունինք նկարագրելու համար այս համով-հոտով փոքրիկներուն կատարումները, որոնք ներկայ եղող չափահասներուն անխառն ուրախութիւն պարգեւեցին:

Պատկերացուցէք օտար ափերու վրայ ծնած, ամերիկեան դպրոց յաճախած 4-14 տարեկան այս փոքրիկները, այդ օր մօտ 10 հազար կան երգ երգեցին, անոնցմէ ոմանք Տիկ. Մարիէթա Անասեանին յօրինած երգերն են, իսկ այս փոքրիկները այդ օր արտասանեցին Շիրազէն, Պարոյր Սեւակէն, Համօ Սահեանէն, Աթաբեկ Խնկոյեանէն, Վահան Թէքէեանէն, Մուշեղ Իշխանէն, Ռազմիկ Դաւոյեանէն, Նոր Տարուայ, հայրենիքի, հայ մշակոյթի եւ հայ լեզուի նուիրում կտորներ արտասանեցին արժանանալով ներկաներուն ջերմ ծափահարութեան:

Վերջաւորութեան խօսք առաւ դպրոցի հոգաբարձութեան ատենապետ՝ Խաչիկ Ժանոյեան: Ան սրտանց շնորհակտութեամբ յայտարարեց օրհնութեան Տիկ. Անահիտ Թովմասեան-Խաչատուրեանը եւ թանկագին բոլոր ուսուցչական կազմը այս հոյակապ աշխատանքին համար, որ միայն 10 շաբթուայ ընթացքին կրցան մասամբ գրել, կարդալ, սորվեցնելու կողքին, այսքան երգ եւ արտասանութիւններ սորվեցնել:

Ապա սրահը թնդացնող տօնական երգերով, պարով, ծափերով, նուագով եւ բացազանչութիւններով մուտք գործեց կաղանդ պա-

Հայաստան Արցախ Ֆոնտը 2019-ի Ընթացքին \$71 Միլիոնի Նպաստ Հայթայթած Ե Հայաստանին ու Արցախին

2019-ի չորրորդ եռամսեակի ընթացքին, Հայաստան Արցախ Ֆոնտը \$6.4 միլիոն արժէքով մարդասիրական օժանդակութիւն հայթայթած է Հայաստանին ու Արցախին: Սոյն օժանդակութիւնը իրականացնելու համար, Հայաստան Արցախ Ֆոնտը \$5.9 միլիոն ընդհանուր արժէքով դեղորայք եւ այլ մարդասիրական պիտոյքներ ապահոված է AmeriCares կազմակերպութեան (\$4 միլիոն), Direct Relief կազմակերպութեան (\$1.6 միլիոն), Կաթողիկէ Բժշկական Առաքելութեան վարչութեան (\$199,000), եւ Քանատայի Health Partners International կազմակերպութեան (\$9,000):

Այս ժամանակաշրջանին մեծարժէք ապրանքներ նուիրած են նաեւ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը (\$282,000), եւ Ակաբէ Մրազիրը (\$223,000):

Այս ժամանակաշրջանին նուիրուած դեղորայքը, բժշկական պիտոյքներն ու առողջապահական (hygiene) իրեղէնը առաքուած են ՀԲԸՄ Քլոտիա Նազարեան Սուրիահայ Գաղթականներու Բժշկական Կեդրոնին, Հայկա Հայրենակցական Բարեսիրական կազմակերպութեան, Արաբիլի Միացեալ Մանկական Բարեգործական Հիմնադրամին, Հայաստանի Ակնաբուժական Մրազիրին, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան (Երեւան), Ժպիտների Քաղաք Բարեգործական Հիմնադրամին, Հայաստանի Օգնութեան Հիմնարկին, Մանկաբարձային, Նորածնաբանական, եւ Կնաբանական Կեդրոնին, Մեծն Ներսէս Բարեսիրական կազմակերպութեան, Մուրացան Ման-

կական Գեղձաբանական Կեդրոնին, Հայաստանի Ազգային Արիւնաբանական Կեդրոնին, Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Բժշկական Կեդրոնին, եւ Հայաստանի ու Արցախի Առողջապահութեան Նախարարութիւններուն:

2019-ի ընթացքին, Հայաստան Արցախ Ֆոնտը իր պատմութեան մէջ աննախադէպ՝ \$71 միլիոն ընդհանուր արժէքով դեղորայք, բժշկական պիտոյք, եւ մարդասիրական այլ օժանդակութիւն հայթայթած է Հայաստանին ու Արցախին: Անցեալ 30 տարիներուն, Հայաստան Արցախ Ֆոնտն ու գայն նախորդած Միացեալ Հայկական Ֆոնտը Հայաստանին ու Արցախին հայթայթած են \$891 միլիոն ընդհանուր արժէքով մարդասիրական օժանդակութիւն՝ 158 թուիչներով եւ 2,456 ծովային արկղերով:

«Հայաստան Արցախ Ֆոնտին կանոնաւորաբար կ'առաջարկուի միլիոնաւոր տոյր արժէքով կեանք փրկող դեղեր եւ բժշկական պիտոյքներ», յայտնեց Հայաստան Արցախ Ֆոնտի Նախագահ Յարութ Սասունեանը եւ շարունակեց՝ «Մեզի կը մնայ հոգալ առաքման ծախսը միայն: Ուրեմն կը քաջալերենք ձեր առատաձեռն նուիրատուութիւնները, որպէսզի կարենանք շարունակաբար այս կենսական օժանդակութիւնը տրամադրել Հայաստանի եւ Արցախի բոլոր բժշկական կեդրոններուն»:

Յաւելեալ տեղեկութեան համար, կը խնդրուի դիմել Հայաստան Արցախ Ֆոնտի գրասենեակին. հեռաձայնի թիւ՝ (818) 241-8900. իմէյլի հասցէ՝ sassoun@pacbell.net:

Now serving Glendale, Burbank, and Pasadena

Այժմ բաց է

Helping seniors live more independently in their own homes

Օգնել տարեցներին ապրել ավելի անկախ իրենց սեփական տներում

Pacific PACE
Program of All-Inclusive Care for the Elderly

Call to learn more
Ավելին իմանալու համար զանգահարեք

(800) 851-0966 | TTY (800) 735-2922 | pacificpace.org

Երիտասարդութեան Բացակայութիւնը

ԵՆՈՎՔ ՊԱԼԻՔԵԱՆ

Ղազուխում դպրոցական դասերի հետ համընթաց, մասնակցել է մարզական եւ այլ միութիւնների աշխատանքներին, հիմնադրել է մանկապատանեկան միութիւններ, թատերական խմբեր, կազմակերպել է հանդէսներ, բեմադրել է մանկապատանեկան թատերգութիւններ: Յովհ. Թումանեանին նուիրուած գրական երեկոյին, որն կազմակերպուած էր երիտասարդական «Կամբ» միութեան կողմից, մէկ շնչով անգիր արտասանել է «Սասունցի Դաւիթ» ժողովրդական էպոսը եւ արժանացել գնահատանքի: Մեծ պատրաստութեամբ, պատանեկան եռանդով, Ղազուխի ազգային «Բաֆֆի» դպրոցի սրահում բեմադրել է «Քաջ Նազար կոմեդիան» (13 անգամ), որն լայն արձագանգ գտաւ իրանահայ մամուլում: Ես կատարում էի Քաջ Նազարի դերը: Դեռ պատանի տարիքից աշխատակցում էի Ղազուխի պարսիկ մամուլին: Ղազարոս Աղայեանի «Արեգնազան»ը թարգմանաբար լոյս ընծայեցի տեղական «Նով ուուզ» շաբաթաթերթում: Յօդուածներ եւ թղթակցութիւններ էի ուղարկում Թեհրանի «Վերածնունդ» օրաթերթին, «Նոր Այլ» եւ «Պահակ» շաբաթաթերթերին: Երգիծական գրութիւններով հանդէս էի գալիս Թեհրանի «Բորոխ» եւ «Յախաւել» երգիծաթերթերում: Իսկ Երեւանի ռատիոյի պիւբլիքի հայրութեան համար տրուող հաղորդումներու լուրերի բաժինը ամէն գիշեր սղագրում եւ յաջորդ օրը հասցնում էի հայրենասէր լրագրող՝ Հայկ Գարազաշի «Վերածնունդ» օրաթերթին: Այդ աշխատանքը շարունակեցի 3-4 տարի: Պաշտօնական թղթակցիցն էի Աղեքսանդրիայի (Եգիպտոս) «Արաքս» շաբաթաթերթին: 1952ից փոխադր-

ուելով Թեհրան, այնտեղ ես անձնական գործ ստեղծելով, մասնակցել է մամանակի «Մշակոյթ» միութեան, որն ամենաբազմամարդաւ եւ ամենակազմակերպուած միութիւնն էր այդ տարիներին:

Թեհրանում ամուսնացայ, որի արդիւնքում ունեցայ 4 զաւակներ (3 տղայ եւ մէկ աղջիկ):

Պատանեկութեան տարիներից սկսած, Ղազուխում յաճախելով քաղաքի ամենաուսուցիչ ատամնաբուժ Տոքթ. Մաթէոս Ոսկանեանի ատամնաբուժարանը, մի քանի տարի յետոյ տիրապետեցի ատամներ պատրաստելու արհեստին, հետագայ է կարճ ժամանակ անց բաց արի իմ անձնական լաբորատորիան՝ Ղազուխում, Թաքէսթանում, Հաշտգերդում, Քարաշում, Թեհրանում եւ այլուր: Ի դէպ, Ամերիկայում ես տարիներ աշխատեցի զանազան ատամնաբուժական հաստատութիւններում: Ինձ վիճակուեց հանրայայտ երգիչ էլվիս Փրէսլիի համար մի քանի արհեստական ատամներ պատրաստել:

1965 թուից հաստատուելով Միացեալ Նահանգներ, Լոս Անճելոսում մասնակցել է մազապիւն բնոյթ կրող մի շարք ձեռնարկների (գրական, թատերական, արտասանական): Իսկ 1970 թուից որոշեցի իրականացնել երկար տարիների իմ երազանաքը, ունենալ սեփական երգիծաթերթ: 1970 թուի Նոյեմբեր ամսին, ձորձ Ուզունեանի տպարանից լոյս տեսաւ «Քաջ Նազար»ի առաջին թիւը, որն անմիջապէս արժանացաւ ընթերցասէր հասարակութեան ջերմ ընդունելութեան եւ գնահատանքին: Թերթի առաջին աշխատակիցը, յատկապէս խրախուսողը եղաւ իմ բազիր, մտաւորական Օշին Քէշիշեանը, իսկ անդրանիկ բաժանորդները՝ Կարպիս Օհանեան եւ Նուպար Կոստանեան, որոնք մեզ ուղարկեցին տարեկան բաժնեգին 6 տոլարի չէքը:

1975 եւ 1978 թուերին այցելեցի Իրան, որի ընթացքում ինձ հետ Իրան էի տարել հայկական կինո-ժապաւէններ եւ զանազան արուեստագէտներ: Երկու անգամ արքայական պալատներում արժանացայ Իրանի արքայ Մահմատ Ռէզա փայլաւոր ունկնդրութեան, որն մօտիկից հետաքրքրուելով Մ. Նահանգներ հաստատուած իրանահայ-

երի կեանքից, գնահատեց մեր թերթը եւ մեր աշխատանքները:

Հոլիվուտում առաջին հայ լրագրողն էի, որ մասնակցեցի Oscar եւ Golden Globe Ֆիլմի միջազգային փառատօնին: Ամբողջ 40 տարի աշխատեցի «Քաջ Նազար»ը պահել իր կոչման բարձրութեան վրայ: Աշխատեցի հեռու մնալ անհատական, կուսակցական նեղ ու ճղճիմ հաշիւներ մաքրելուց, քինախնդրութիւնից եւ բամբասանքից:

Շուրջ կէս դարի ընթացքում ունեցայ բազմաթիւ վերիվայրումներ, այն աստիճան, որ երբեմն մտածում էի թողնել թերթը ու վերադառնալ իմ անձնական ձեռնարկութիւններին: Սակայն ժողովրդին ծառայելու սէրը ինձ խթանեց շարունակելու հայ լրագրող ապերախ եւ անշորհակալ գործը, երբեմն գնահատուելով, երբեմն ստանալով հայհոյակից եւ սպառնալից հեռախօսներ:

1933 թուի Յունուար 5ին, երեկոյեան ժամը 7:00ին, (Յիսուս Քրիստոսի Ծննդեան գիշերը) իմ գրասենեակի առջեւ, մթութեան մէջ յարձակման ենթարկուեցի դիմակաւորների կողմից, որոնք ետեւից մահացու հարուածներ հասցնելով, փախան հերոսաբար, իրենց տմարդի սովորութեան համաձայն:

Ամէն տարի կազմակերպել եմ ուրախ երեկոյներ, գրական-յոբելեանական հանդիսութիւններ: Հայրենիքից հրաւիրել եմ գեղարուեստական խմբեր, արուեստագէտներ: 10-11 անգամ անձնական նախաձեռնութեամբ եւ կամ մշակութային կապի միջոցով այցելել եմ Հայաստան, արժանանալով ջերմ ընդունելութեան, պետական մակարդակով:

Որպէս իրանահայ, հենց սկզբնական օրերից ջերմ շփման մէջ եմ եղել Լոս Անճելոսի իրանահայ Միութեան հետ: Թերթիս էջերը լայնօրէն բացել եմ միութեան առաջեւ անդրադարձել եմ միութեան բոլոր ձեռնարկներին, մէկ շրջան եղել եմ միութեան վարչական:

Այժմ մի քանի խօսք իմ ընտանիքի մասին: Հայրս՝ Յարութիւն Ա. Քհնյ. Մերոպեան-Բալայեան, մայրս բարեպաշտ, նուիրուած հայ մայր: Իրանում հայոց դպրոցների փաման պատճառով չեմ կարողացել հայկական դպրոց յաճախել: Հայրս՝ Ղազուխում շատ զաղտնի պայմաններում կազմակերպեց հայոց լեզուի ուսուցում: Այդ մտադրութեամբ սկսեց ձեռագիր դասագիրքեր պատրաստել: (Այն օրերին, 1937 թ., ոչ դասագրքեր կային, ոչ էլ ֆօթօ պատճէնի յարմարանք): Ձեռագիր դասագիրքերը հագուստների մէջ թաքցրած հաւաքում էինք Ղազուխի Ս. Հովհաննէս եկեղեցում եւ «կրօնի» անուան տակ հայերէն էինք սովորում: Այդ աշխատանքներին մեծապէս օգնում էր մեծ եղբայրս՝ Մերոպը: Հայերէն սովորելու համար ոչ մի ջանք չխնայեցին հայրս եւ եղբայրս: Դրա հետ զուգընթաց կարողում էի բազմաթիւ հայերէն

գրքեր եւ թերթեր: Թերեւս իմ ստացած ազգային դաստիարակութեան պատճառով է, որ ոգով ու սրտով կապուել եմ Մայր Հայրենիքի հետ եւ միշտ մնացել եմ հայրենասիրական ճակատում: Հայրենիքը պաշտպանել եմ երբ այնտեղ տիրում էր համայնավար իրաւակարգ: Որովհետեւ հաւատացած եմ որ վարչակարգերը եւ դեկավարները անցնող-գնացող են, միայն հայրենիքն է մնալուն:

Մեծ եղբայրս՝ Մերոպը աւարտելով Թեհրանի Պետական Համալսարանի ֆրանսական գրականութեան ճիւղը, որպէս գերագանց ուսանող, Իրանի պետութեան կողմից ուղարկուեց Փարիզ, Սորբոնի համալսարանում շարունակելու իր ուսումը: Յաջողութեամբ աւարտելով իր նախասիրած ճիւղերը Մերոպը ստացաւ հոգեբանութեան եւ ֆրանսական գրականութեան դոկտորայի տիտղոսները ու վերադառնալով Իրան, հրաւիրուեց Իսֆահանի Պետական Համալսարան, ուր հիմնեց եւ վարեց հոգեբանական լաբորատորիան եւ հայագիտական ճիւղերը: Ան ունի հարիւրաւոր հոգեբանական, գիտական յօդուածներ: Պարզեւատրուել է գիտական շքանշաններով եւ ստացել տասնեակից աւելի պատուոյ գիրքեր՝ Իրանի, Հայաստանի, Ֆրանսայի եւ Լեհաստանի պետութիւնների կողմից: Ան ունեցել է հազարաւոր ուսանողներ, որոնց մի մասը այսօր Իրանի պետական կառոյցի մէջ նախարարներ եւ քաղաքական կարեւոր դէմքեր են:

Միւս եղբայրս՝ Ներսէսը «Քաջ Նազար»ի հրատարակութեան օրից աշխատակցել է թերթիս, գրելով համով հոտով երգիծական յօդուածներ եւ ակնարկներ: Նա իրանում եւ այլուր ծանաչուած է որպէս շնորհալի երգիծագիր եւ բանաստեղծ: Հայերէն լեզուն սովորել է հօրս եւ մեծ եղբորս օգնութեամբ: Տպագրել է բանաստեղծութիւնների 4 հատոր: Իր երգիծականները ամփոփուած են «Խառնափնիթոր» եւ «Առօրեայ կեանքում» հատորների մէջ, որոնք անտիպ են: 1988 թուին արժանացել է Հայկաշէնի Ներսէս Շնորհալի գրական մրցանակին: Ան գրել է 40 տարիներ «Քաջ Նազար»ի մէջ որպէս Մատչի Բաշի ստորագրութեամբ: «Քաջ Նազար»ի յաջողութեան եւ յարատեւման համար նա ունի աւելի բաժին: Ունեմ նաեւ մէկ քոյր, որն ամուսնացած է ունի երկու զաւակ եւ 4 թոռ:

Ահա մեր գերդաստանը: Ես աշխատեցի ինձ ներկայացնել այնպէս, ինչպէս որ եղել եմ ու կամ: Խօսելով մեր ընտանիքի մասին, նպատակ եմ ունեցել ընթերցողներին ծանօթացնել մեր ընտանիքում տիրող վիճակին, պայմաններին, որտեղ ես ստացել եմ սնունդ եւ հայեցի առողջ դաստիարակութիւն:

Կարծում եմ մասամբ յաջողել եմ:

Յովհաննէս Բալայեան
Սեպտ. 1, 2012
Լոս Անճելոս

Logo for SYRIAN ARMENIAN RELIEF FUND with text: Զօրացիկը Օժանդակները Փրկենք
www.syrianarmenianreliefund.org
Syrian Armenian Relief Fund
P.O. Box 1948
Glendale, CA 91209-1948

Նոր Տարուան Խորհրդածութիւններ Քրիստոնէական Իրագործում

ՄԱՍԻՍ շաբաթաթերթին յատուկ մեր սրտագին շնորհաւորութիւններով ու բարի մաղթանքներով

ԴՈԿՏ. ԶԱԻՖՆ Ա. ՔՀՆՅ. ԱՐ-ԶՈՒՄԱՆԵԱՆ

2020 թուականի Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան գոյգ առիթներով հարկ է պահ մը մտածել մեր ինքնութեան մասին որմէ կ'ակնկալենք իրագործում մեր կեանքի ընթացքին, երկուքն ալ՝ ինքնութիւնն ու իրագործումը ըլլալով մեր անմիջական հեռանկարներու յաջողութիւններուն գիրար ամբողջացնող լրացուցիչները:

Տարին արագ կը թաւալի եւ Սուրբ Ծնունդը կը վերանորոգէ գմեզ, շնորհընկալներս, մեր ջանքերը լարելու համար դէպի դրական իրագործում: Որքան ատեն որ մարդուս ինքնութիւնը կը զարգանայ ժամանակի ընթացքին, յոյս կայ որ այդ ընթացքը դէպի Աստուած առաջնորդէ գինք բարի ծրագիրներու իրագործումով, իրական եւ ոչ թէական կամ ըզձական տեսիլքներով: Ինքնութիւնը ինքնահարեալ եւ յայտարարուած որակում մը չէ, այլ Աստուծմէ սրուած պարգեւ մը, իրողութիւն մը, եւ ապրելակերպ մըն է որ մարդս կը մղէ յարաբերելու եւ գործելու իր նմանին հետ՝ հակակշիռը միշտ յարգելով եւ պահելով երկուքին միջեւ:

Եթէ ոմանք անցնող տարիներու արժէքն ու ազդեցութիւնը մոռնալով չեն պահեր ինքնութեան զարգացումի այդ ընթացքը, հեռացած կ'ըլլան թէ՛ անցնող տարուոյն ընծայած բարիքներէն եւ թէ՛ գրկուած կ'ըլլան հաւատքի ու հաստատմութեան վերանորոգ գորութեան: Այդ տեսակ մարդիկ կը վստահին միայն իրենց գիտցածին եւ կարողութեան վրայ, որոնք վաղանցիկ կ'ըլլան ընդհանրապէս, ու այդ ձեւով ալ ապացոյցը կուտան միակողմանի եւ քմահաճ գործելաոճի մը:

Ինքնութեան ճանաչումը լաւապէս կը հասկնանք երբ կարգանք Յիսուսի ներթափանց խօսքերը իր տասներկու աշակերտներու ընտրութեան մէջ, քանզի անոնք պատահաբար չեկան միանալու խմբակին, այլ Տէրը ինք կանչեց իւրաքանչիւրին ինքնութիւնը ճանչնալով, նոյնիսկ մատնիչ աշակերտին ինչ ըլլալը գիտնալով՝ կանչեց գինք յանուն նախախնամութեան, քաջ գիտակցելով անոր վատ ու մահաբեր բաժինը իր առաքելութեան նկատմամբ: Երբ Նախնայէլ, օրինակի համար, թգեհի ծառին տակ կը նստէր, գիտնալով անոր ինքնութիւնը Փիլիպպոսի միջոցաւ Յիսուս գինք իր քով կանչեց, ըսելով «Ահա մարդ մը որուն մէջ նենգութիւն չկայ»: Նա-

թանայել որուն անունն էր նաեւ Բարթողիմէոս, դարձաւ Հայաստան աշխարհի Առաջին Լուսաւորիչը՝ Թադէոս Առաքելին ետք, որոնց չիշատակը Հայ Եկեղեցին տօնեց նոյնմբեր 30-ին:

Փորձութիւնը հոն է երբ կամովին կ'անգիտանաս «Աստուծոյ Պատկերը» որով սկիզբէն շնորհագարդարուեցար, անգիտանալով նաեւ Աստուծոյ բարերար առաջնորդութիւնը, վստահելով միայն քու ուժերուդ, ու կը մնաս առանձին: Այս իրողութիւնը պարզ հարցումի մը ետին Յիսուս հաստատեց, ըսելով եթէ իր աշակերտները կ'ուզէին իրեն հետեւիլ կամ ոչ: Պետոս Առաքեալ իսկոյն պատասխանեց, ըսելով թէ որո՞ւ կրնային հետեւիլ բացի իրմէ որ ունի յոյսի եւ լոյսի կեանքը որպէս Աստուծոյ Որդին:

Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան հրաւերն է զգաստ ըլլալ եւ լրջօրէն հասկնալ Քրիստոսի կատարած գործին հոգեկան ոլորտը ուր մարդ կրնայ տեսնել եւ գնահատել միտքի, զգացումի, կամքի, եւ գոյութեան փորձառութեան լիութիւնը: Եւ այդ լիութիւնը հիմքը կը կազմէ մեր վերեւ կրկնած ինքնութեան եւ իրագործման լիբրաւ դրսեւորման: Միտքի, զգացումի, կամքի, եւ գործի հրաշագործ հանդիպման խաչմերուկին է որ մարդ պիտի տեսնէ Տիրոջ ճշմարիտ սէրն ու գուրգուրանքը՝ կեանքի եւ յարատեւ նուիրումի վերածուած: Չմոռնանք Աստուածադիր պատգամը՝ «Մարդ է որ գործէ գերկիր», չիրաւի անկրկնելի եւ անշրջելի պատգամ:

Նոր Տարուան սեմին մեր ականջին թող հնչէ այն պատգամը թէ Քրիստոնէական հաւատքը երբեք դիւրահաւան կամ «կախարդական» ճամբայ չի քարոզեր կեանքի դժուարութեանց դէմ, այլ խաչի նուիրական խորհուրդով հիմնական հաւատքի ապահովութիւնը կը շնորհէ օգնելու մարդուն որ գիտակից որոշումներ առնէ՝ ճանչնալով Մարդացեալ Փրկչին միջամտութիւնը մարդոց կեանքին մէջ:

Հայ ժողովուրդի պատմութիւնը խօսուն օրինակն է այս մեծ պատկերին, Աստուծոյ ուղղակի յարաբերութեանը ընդմէջ Հայ աշխարհի, սկսեալ առաջին մէկ օրէն: Հայ ժողովուրդի պատմութիւնը խաչին պատգամն իսկ է, որմէ ճառագայթեց մարտիրոսութիւնն ու փրկագործութիւնը: Կը մնայ մեզի մեր ինքնութիւնը ճշդել խաչի գորութեամբ եւ իրագործել այն ինչ որ կը պահանջէ նժարին միւս կողմը:

Նոր Տարի 2020

Իրաքահայերու Ընտանեկան Միութեան

Շարունակուած էջ 7-էն

պան (Ձմեռ պապիկ), իսկ արաստաղէն ձիւնաթերթիկներու հեղեղ մը իջաւ: Ձմեռ պապիկը իր գեղեցիկ նուէրները տալէ առաջ, պահ մը լսեցի փոքրիկներուն երգերն ու արտասանութիւնները, որոնք խորապէս գոհ ձգեցին կաղանդ պապային եւ արժանացան անոր բերած նուէրներուն:

Ձմեռ պապիկին հետ միասին

ժողովուրդը հայկական պարեղանակներու եւ երգերու խանդավառ կշռոյթներու վրայ մօտ կէս ժամ պարելէ ետք, բոլոր աշակերտները եւ ծնողները սրահէն դուրս ելան Ձմեռ պապիկին հետ նկարուելու համար: Ձերմօրէն կը շնորհաւորենք այս վարժարանի բոլոր պատասխանատուները այս չիշարժան եւ անմոռանալի ձեռնարկին համար, բոլորին ըսելով՝ Ձեր ՎԱՐՁՔԸ ԿԱՏՈՐ:

2020-ի Տարեդարձներ

- Աղասի Այվազեան (1925) - 95 ամեակ
- Անդրանիկ Օզանեան՝ Չօրավար Անդրանիկ (1865) - 155 ամեակ
- Արամ Հայկազ (1900) - 120 ամեակ
- Աւետիք Իսահակեան (1875) - 145 ամեակ
- Գրիգոր Արծրունի (1840) - 175 ամեակ
- Երուխան (1875) - 150 ամեակ
- Երեւանի Պետական Համալսարան (1920) - 100 ամեակ
- Երեւանի Բժշկական Համալսարան (1930) 90 ամեակ
- Թովմաս Թերզեան (1840) - 180 ամեակ
- Ժանսէն (1920) - 100 ամեակ
- Ինտրա (1875) - 145 ամեակ
- Խաչատուր Աբովեան (1805) - 215 ամեակ
- Խորէն Աբրահամեան (1930) - 90 ամեակ
- Խորէն Պալեան (1935) 85 ամեակ
- Կոստան Չարեան (1885) - 135 ամեակ
- Համաստեղ (1895) - 125 ամեակ
- Հայր Ղեւոնդ Ալիշան (1820) - 200 ամեակ
- Հայկազեան Գոլշէն (1955) - 75 ամեակ
- Հայ Թրքական Պատերազմ (1920) 100 ամեակ
- Հայաստանի Երկրորդ Հանապետութիւն (1920) 100 ամեակ
- Հայոց Ցեղասպանութիւն (1915) 105 ամեակ
- Հնչակեան 20 Կախաղաններ (1915) 105 ամեակ
- Հաճնոյ Հերոսամարտ (1920) - 100 ամեակ
- Ղազարոս Աղայեան (1840) - 180 ամեակ
- Մայքլ Արլէն (1895) - 125 ամեակ
- Մանուկ Աբեղեան (1865) - 155 ամեակ
- Մարտիրոս Սարեան (1880) - 140 ամեակ
- Մկրտիչ Խրիմեան (1820) - 200 ամեակ
- Յոհաննէս Աբէլեան (1865) - 155 ամեակ
- Նուպար Չարխուտեան (1920) 100 ամեակ
- Ռաֆայէլ Պատկանեան (1830) 190 ամեակ
- Ռաֆֆի (1835) - 185 ամեակ
- Սիլվա Կապուտիկեան (1920) - 100 ամեակ
- Ռուբէն Սեւակ (1885) - 135 ամեակ
- Սեւրի Դաշնագիր (1920) - 100 ամեակ
- Ստեփան Մալխասեանց (1875) 145 ամեակ
- Վահան Տէրեան (1885) 135 ամեակ
- Վարդան Աճէմեան (1905) - 115 ամեակ
- Վանի Հերոսամարտ (1915) 105 ամեակ



Highlights:

All major Yerevan art and history museums, Sardarabad war memorial, Holy city of Etchmiadzin and surrounding historic sites, Garni temple, Lake Sevan, Tsaghkadzor ski-lift, express train trip to Gyumri, Amberd castle, sacred sites of Khor Virap and Oshakan, medieval monasteries of Haghartsin, Kecharis, Geghard, Noravank and Hovhannavank, charming cities of Dilijan and Goris, winery tours, ancient Vardavar celebration, and two days in mountainous Artsakh.

Cost per person (double occupancy): \$3395 + tax

Trip includes:

Round-trip air fare from LAX, full transportation and transfers in air-conditioned buses, breakfasts, select lunches and dinners as specified in the itinerary, 4-star accommodation (double occupancy), entrance fees for all sightseeing destinations, museum tour guides (Armenian and English), farewell dinner with live music and dance.

Space is limited. For more information, contact:
 NorayrDaduryan@gmail.com
 or (800) 826-7960- Carlo

Delve deeper and discover more with an award-winning Armenian teacher as your guide in Armenia.

Հայկական Տաղասացուքին 1100-1722 Բ. Մաս



Կեչառիսի վանքը

ՆՈՐԱՅՐ ՏԱՏՈՒՐԵԱՆ

Նախորդ յօդուածի մէջ, չար-
գելի ընթացող, մուտք գործեր
էինք հայկական միջնադարեան տա-
ղասացուքեան քնարական պարտէ-
զը ու կատարեր էինք աշխարհիկ
մեղեդիներու ձայնաքաղ մը: Այսօր
շարունակենք մեր պտոյտը ու լսենք
Հայկական լեռնաշխարհի 1200-
1400ական թուականներու մերթ
հեշտագին, մերթ ողբագին ձայնե-
րը:

Կոստանդին Երզնկացին բնու-
թեան, կեանքի, ծառ ու ծաղիկի
առաջին այլաբան երգիչն է: Ինչ-
պէս իր անունէն յայտնի է, բանաս-
տեղծը ծնած է Եկեղեցաց գաւառի
Երզնկա քաղաքի մէջ: Ան ապրած
ըլլալու է 1250-1320 թուականներու
միջեւ: Մանկութեան տարիներու
ստացած է հոգեւոր ուսում,
հաւանաբար իր ծննդավայրի Տի-
րաչէնի վանական դպրոցի մէջ:


Կոստանդին Երզնկացին հայ-
կական միջնադարեան տաղերգու-
թեան մեծագոյն անուններէն է:
Անոր բանաստեղծութիւնները գար-
նան եւ սիրոյ գովերգութիւններ
են: Կ. Երզնկացին գրի առած է
նաեւ վարդի եւ սոխակի սիրավե-
պեր, որոնք ջերմ երկխօսութիւն-
ներ են: Ահա այսպէս. (Սոխակը)
Առանց քեզ ո՞նց ելնում ի հուն. /
Հանց քաղցիր գշունչս ու հոգիս՝
/ Այլ չի մնաց երեսս քուն: (Վար-
դը) Իմ լուսատու արեւն դու, /
Աստղն գոհալ եւ մուշտարի, /
Շամս ու դամար իմ թաճս դու»:

Կ. Երզնկացիի տաղերէն մէկը
ուղղուած է իր սէրը անտեսող
«անխիղճ» գեղեցկուհիին. «Հոգի՛,
աչերուս իմ լոյս, / Երբ որ ի
դիմացս ելնուս, / Փախչիս, երբ որ
գիս տեսնուս, / Խղճա՛ քո գերոյս,
իմ լոյս: / Դու գլոյս աչերուս
առնուս, / Դու ես հոգի իմ հոգոյս,
/ Խղճա՛ քո գերոյս, իմ լոյս»:

Բանաստեղծը, ինչո՞ւ գար-
մանալ, պիտի տառապէր երկրայի-
նի եւ երկնայինի միջեւ, ու պիտի
հալէր մոմի նման: Այդ ներքին
պայքարը իր պատկերաւոր արտա-
յայտութիւնը կը գտնէ հետեւեալ
տողերու մէջ. «Հոգիս խիստ է
յօժար բանից իմաստնոց լսել, /
Մարմինս է հեշտասէր, գի յաշխար-
հէս է ինք ծնել: / Ի յերկուքիս
միջին մոմ եմ ի մէջ հրոյն վառել,
/ Անհիմն ու անհաստատ՝ եմ ան-
հանգիստ ի շուրջ եկել»:

Խաչատուր Կեչառեցին ապ-
րած է 1260-1331 թուականներուն:
Ստեղծագործած է Մարկաձորի Կե-
չառիսի վանքին մէջ, Պոռշեան
իշխաններու հովանաւորութեամբ:
Աննախընթաց անձնաւորութիւն է
Կեչառեցին: Անոր գործերը կը
վերաբերին կեանքի վարանցու-
թեան, մահուան, սարսափելի դա-

տաստանին, հայրենասիրութեան եւ
մարդասիրութեան: Եզակի եւ յե-
ղափոխական է անոր կեցուածքը
«մարմին-հոգի» դարաւոր հարցի
նկատմամբ: Ըստ անոր, ո՛չ թէ
մարմինն է, որ կ'արատաւորէ հոգի-
ին, այլ՝ հոգին է յանցաւոր մարմնի
գործած մեղքերուն համար, քանզի
հոգին է տէրը, իսկ մարմինը, անոր
ենթակայ գերի, ինչպէս հլու ձի, կը
հնազանդի իր տիրոջ կամքին...
«Ես ձի եւ դու տէր ձիոյս, / Ես
ծառայ 'ւ իշխան դու գերոյս, /
Կամ իղձ քո՝ գործ լինէր ինձ. / Մեղ
է՞ր դնես հողածոնոյս»: Կեչառեցին
ունի նաեւ խրատական գործեր:
Ահա օգտաշատ քանի մը նմոյշ.
«Ձաչերդ շատ մի՛ ածեր, թէ ոչ՝




Յովհ. Թլկուրանցիի սիրային տաղերէն մէկը Յակոբ Մեղապարտի «Տաղարան»ի մէջ: (1513)

չար սրով դա խոցի, / Ձլեզուդ
արձակ մի՛ թողուր, որ չածէ գրեզ
պատուհասի», «Առնել լաւ է, քան
ասել եւ ոչ կատարել, / Աղքատ եւ
արդար լաւ է, քան գիտուն եւ յոյժ
մոլորել», «Սակաւ գիտութիւն լաւ
է, քան գիտել եւ ոչ կատարել, /
Մին ձեռք երկինս լաւ է, քան
երկու ձեռք դեգերել»:

Յովհաննէս Թլկուրանցին
(14րդ-15րդ դար), սիրոյ եւ բնու-
թեան տաղերու հեղինակ է, ինչպէս
նաեւ այդ տաղերու երգահանն ու
երգիչը: Յիշել կ'արժէ, թէ անոր
տաղերը լոյս տեսած են Յակոբ
Մեղապարտի 1513ին վենետիկի
մէջ հրատարակած «Տաղարան»ի
մէջ: Թլկուրանցիի խօսքերը այլա-
բանութիւններ չեն: Անոնց մէջ կայ
ինքնամոռաց սէր, զգացումներու
պոռթկում եւ անկաշկանդ արտա-
յայտութիւններ: Այդ երգերու մէջ
կայ գեղեցկուհիի մարմնական բա-
րեմասնութիւններու համարձակ

պատկերաւորումը: Ահա քանի մը պա-
տառիկ. «Մոցդ է
դրախտ անմահու-
թեան ի յետ դարձ-
նէ գելած հոգին»,
«Ուրակ ճակատ ու
ճոխ բերան, ծամն
ու վարսերն էր հո-
գեհան», »Տեսայ
պատկերք մի գե-
ղեցիկ, գէտ գարե-
գակն, որ լոյս կու
տայ»: Ըստ Թլկու-
րանցիի, սիրոյ ոչ-
ժը աւելի գորաւոր
է քան կուսակրօն
հոգեւորականի հա-
ւատքը. «Մարդ որ
սիրու կը հանդի-
պի, նայ քան զկրակ
կու լինի վառ, / Այլ ո՛չ աղօթք
միտքն կու գայ, ո՛չ Յայսմաւուրք
կարգայ եւ ճառ»: Թլկուրանցին
հոգեղէն գեղեցկուհիին կը նկա-
րագրէ բնութեան պատկերներով.
«Աղէկ պատկեր բոլոր եւ գեղեցիկ
ես, / Բերանդ շաքով իլի թուլակ
լեզու ես, / Գոյնդ է կարմիր
վարդին, հոտովդ անոյշ ես, /
Դրախտ ես ու պաղչայ, ծաղկի
նման ես»: Իսկ Թլկուրանցիի գան-
գատներն ու տրտունջները ունին
հասարակական միտք, որ կը ցո-
լացնէ ժամանակաշրջանի ազգա-
յին կեանքի անմխիթար վիճակը.
«Հովիւ հունինք տեսող, ու մենք
ենք մոլորեալ ոչխար, / Շատ գայլք
են յարձակել ի վերայ մեր, խիստ
անհամար... / Ի մէջ ծովուս ծփինք,
ո՛չ նաւ ունինք, ո՛չ՝ նաւավար»:



Ըստ Թլկուրանցիի, սէրը աւելի հզօր է քան որեւէ դաւանանք

գանձես, ոչ գիտես, թէ ում ժողո-
վես»:
Ինչպէս նախորդ յօդուածի
մէջ նշած էի, միջնադարուն Հայ-
կական լեռնաշխարհի մէջ կը հնչէր
ձայն մը, որ աւելի յուզիչ էլ



Հայկական տաղասացութեան մէջ յայտնի էր վարդի եւ սոխակի սիրավեպ

սրտածմլիկ էր, քան սիրահարի
սիրասոյզ մրմունջը, կամ՝ վանա-
կանի ողբագին հառաչանքը- պան-
դուխտի ձայնն էր ան, որ մուսլլ էլ
աղիողորմ շեշտերով կ'աղաղակէր
մեր սարերու վրայ, մեր ձորերու
մէջ: Այդ եղանակներու, հայու

Շար.ը էջ 18

Just listed!

39228 Raphael Ln, Palmdale, CA 93551

- 3 Bedrooms
- 2478 Square Feet
- 7096 Square Foot Lot
- 2.5 Baths
- Year Built: 1997
- 2 car attached garage

Exceptional two story KB home on private cul-de-sac. Fully furnished and move-in ready. Many upgrades throughout, including ceramic tile floors, custom kitchen, remodeled bathrooms. Ample backyard, replete with abundant flora, bountiful fruit trees, a gurgling Koi pond and inviting pergola. Schedule a private viewing today.

Offered at: \$475,000

Nick Karasarkisian
Broker/Owner
213-706-9990
E-mail: nickkarasarkisian@gmail.com
CalBRE # 01022153

Information deemed reliable but not guaranteed

«Հայրենի եւ Սփիւռքահայ Խճանկարներ» «Դուք Տոլարճի էք»



ԴՈՎՏ. ԳՐԱՅՐ ԸՆՊԵՏԱՆ

Սեպտեմբեր 2019: Երեւանի Պետական համալսարանի Ժուրնալիստական բաժանմունքին նախաձեռնութեամբ եւ կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ իմ գիրքի՝ «Սփիւռքահայ կեանքեր՝ ինչպէս որ տեսալ» շնորհանդէս-ներկայացումը: Եթէ առաջին ժամը հայրենի ակադեմիականներու եւ գիտնականներու կողմէ ներկայացուեցաւ գիրքը՝ բաց երկրորդ լման ժամ մը, առիթը տրուեցաւ ուսանողներու, որպէսզի ներկայացնեն իրենց հարցերը ու հարցադրումները: Եւ երեւի մէկ ժամը բաւարար չէր, որպէսզի կարելի ըլլար իրար յաջորդող եւ տեղատարափ անձրեւի նման իրար ետեւէ ներկայացուած տարբեր հարցումներուն պատասխանները եւ քննարկումները կատարել ըստ պատշաճի: «Պէտք է դասարան վերադառնան», ըսաւ դասախօսներէն մին, եթէ մեզմ ժպիտ մը կար իր դէմքին՝ բաց նոյնքան նաեւ կարծէք յանցաւորի զգացումով՝ թէ պիտի ընդհատէր ուսանողներու հետաքրքրութիւնները եւ գիրքն ք մտահոգող հարցերը ու միտքերը: Բայց այդ մէկ անբաւարար ժամը բաւարար էր ինծի համար, տեսնելու թէ Հայաստանի մէջ ունինք երիտասարդական ուժեղ «միտք»: Միտք մը՝ որ ունէր մտահոգութիւն, հետաքրքրութիւն, երկրին, հողին, բայց մանաւանդ հայուն եւ անոր կեանքին եւ ապրելակերպին տարբեր գրաւականներուն վրայովը: Եւ ինչպէս որ հաւատացած ենք՝ հայուն ամբողջական մշակութիւն: Եւ այս ամբողջական մշակութիւնը եւ միտքն են, որ իւրաքանչիւր հաւաքականութեան անհատը կը վերածեն մշակութային էակի: Ես, դուն եւ իւրաքանչիւր հայ, կը դառնանք մշակութային էակ, զինուած մշակութային մեր արժէքներով եւ որ կ'օգնէ մեզի կերտելու մեր կեցուածքը աշխարհի նկատմամբ:

Եւ այս «մշակութային էակները» ու տակաւին «միտքերն» էին որ ես ապրեցայ Երեւանի Պետական համալսարանին մէջ: Հոն ուր հայուն եւ ի մասնաւորի երիտասարդին մտքին պայծառութիւնը տեսնելով՝ ապրեցայ հայուն կեանքը նոր մակարդակներու եւ տեսլականներու մէջէն:


Սեպտեմբեր 29 ին՝ Երեւանէն կը մեկնիմ Ստեփանակերտ: Եղանակը գեղեցիկ եւ պայծառ: Սեւանայ լիճի կողմէն անցնելով, դարձեալ կը հմայուիմ անոր գեղեցկութեանը վրայով ու անցնելով Վարդենիսի նոյնքան գեղեցիկ ճանապարհէն եւ Արցախի հանրապետութեան լեռներու մէջէն կը մտնեմ

Ստեփանակերտ:
Երկուշաբթի առաւօտ պանդոկին ճաշարանին մէջ կը նախաձեռնեմ: Ճաշարանին սեղանները բոլորն ալ գրաւուած են: Շատ ալ դժուար չէր տեսնելու, թէ բոլորն ալ հայեր էին՝ անկախ այն իրականութենէն, թէ շատ հայերէն չէի լսեր...: Եւ նկատի ունենալով որ կը նստէի այսպէս ըսած մէջտեղի սե-

ղաններէն մէկուն, աւելի դիւրին եղաւ տեսնել, բայց նաեւ լսել, իմ չորս կողմի նստած հայորդիները: Ձախին՝ երկու չափահաս տիկիւններ, որոնք հայեր էին, կը խօսէին ռուսերէն: Աջին՝ բազմանդամ ընտանիք մը եւ երեւի Ամերիկացի Միացեալ Նահանգներէն եկած՝ կը խօսէին անգլերէն: Եւ ճաշարանի ճախ կողմի հանդիպակած մի քանի սեղանները գրաւուած էին բաւական մեծ խումբ մը հայերով, որոնք կը խօսէին ֆրանսերէն: Ստեփանակերտի պանդոկին ճաշարանը կարծէք այդ օր դարձաւ «Բաբելոնի Աշտարակը»...: Հոն, ուր տարբեր լեզուներ խօսուեցան եւ իրարու խառնուեցան...: Բայց յատկանշականը ֆրանսական խումբին առաւօտեան այդ ժամուն խանդավառութիւնն էր: Եւ հոն կար չափահաս-տարեց տարիքին ստնակոխող մարդ մը, միջահասակ, որ յայտնի էր որ արթնցած էր շատ «աշխույժ»: Եւ մէկ սեղանէ միւսը կ'անցնէր ու կը կատակէր եւ մթնոլորտ կը ստեղծէր: Եւ կային իմ մտորումներս: «Այս ինչքա՞ն աշխույժութիւն առտու կանուխէն»: Երբ տակաւին մտորումներս չէի ամփոփած, ան մօտեցաւ իմ սեղա-

նին եւ ըսաւ հայերէն ֆրանսական հնչիւնաբանութեամբ: «Դուն հայ ե՞ս»:
Երեւի դժուար չէր իրեն համար գուշակել, թէ ես ալ հայ եմ: «Այո», եղաւ իմ արագ եւ հաստատ պատասխանը:
«Ես եւ իմ բոլոր բարեկամները Մարսիլիայէն եկած ենք եւ հոն ծնած ենք եւ հոն ալ կ'ապրինք», եղաւ իր արագ ու խտացուած կենսագրութիւնը իր ու բոլորին կեանքին:
Եւ հիմա կըրցայ աւելի լաւ հասկնալ իր ու խումբին աշխույժութեան մշակութային տարբերակը: Վերջապէս՝ միջերկրականեան քաղաք է եւ այդ ծովուն շնորհած կեանքի ուժականութիւնը լեցուցած է անոնց կեանքերը...:
«Իսկ դուն ո՞ր երկրէն կու գաս», շարունակեց ան:
«Լիբանանէն եմ», ըսի իրեն:
«Պէջրութ ծնած եմ»:
«Ահա...», եղաւ իր ուրախ բացազանչութիւնը: Եւ դէմքին վրայ կըրցայ տեսնել սրամիտ-կատակի երեւոյթ մը արտայայտելու իր ճիգը:

Շար.ը էջ 18





St. Gregory Armenian Apostolic Church Men's Forum
(Ladies & Families Always Welcome)

Thursday, January 30 – 6:30 P.M.


“SPECIAL ARMENIAN DIASPORA EVENT”

LIFETIME ACHIEVEMENT AWARD BEING PRESENTED TO:

MR. KENNETH KHACHIGIAN

NAMED: 100 ARMENIANS WHO CHANGED THE WORLD



- * President Reagan's Chief Speech Writer, Senior Political Adviser and Special Consultant
- * Served in The White House for Three U.S. Presidents
- * Adviser to Nine Presidential Campaigns
- * Instrumental in Guiding **George Deukmejian** to Victory As Governor of the State of California.

"Like the Genocide of the Armenians before it, and the Genocide of the Cambodians which followed it — and like too many other such persecutions of too many other peoples — the lessons of the Holocaust must never be forgotten." President Ronald Reagan, April 22, 1981

At St. Gregory the Illuminator Church "Geragos Hall" 2215 E. Colorado Blvd., Pasadena

RSVP'S Are A Must As Dinner Will Be Served Church Donation \$20

Hilda Gourdikian: 626-695-9899, Ardash Gourdikian: 626-399-1914, Church Off. : 626-449-1523

Sponsor A Dinner in Memory of a Loved One, a Birthday, an Anniversary, in Recognition of a Friend or Family Member, a Graduation & for any Other Event. Please Contact Hilda Gourdikian above.

Մարտիկ Մատենդեանի Ցեղասպանութեան Մասին Գիրքը

Շարունակուած էջ 13-ԷՍ

անոր շինութիւնը կատարուած է 1525-1526 տարիներուն, ըստ գիւղի մոլորակին:

Երեկոյցին Մարտիկին տարին գիւղի նախակրթարանին տարեվերջի վկայանաց հանդէսին, որուն ներկայ էր գիւղապետէն գատ, նաեւ գաւառապետը եւ ոստիկանութեան հրամանատարը:

Հանդիսութեան ինթացքին Մարտիկ տեսաւ զարմանալի բան մը: Բեմին վրայ տեղադրուած էր Տա Վինչիի Յիսուսի Վերջին Ընթրիքի գորգը: Գիւղապետը ըսաւ որ բեմի զարդարանքի համար էր:

Յաջորդ օր փիքնիքի գացին Հաթապալան կոչուած վայրը, որ կը գտնուէր Չաթի անտառներուն մէջ: Կէսորէ ետք, զոյգ մը տարեց ամուսնեւ եկան այցի եւ ճաշի հիւր եղան: Երբ իմացան որ Մարտիկ հայ էր, սկսան անոր հետ հայերէն բառեր փոխանակել, ի զարմանս Մարտիկին: Խօսակցութեան ընթացքին, ամուսինը պատմեց որ տղան Պաղտատ գացած էր եւ հոն Չաթի հայու մը հանդիպած: «Հակառակ անոր որ մարդը հայ եմ ըսած էր, տղան անուշադրաբար, կ'ըսէ որ ժամանակին շատ հայեր ապրէին Չաթ, որոնց մեծ մասը ջարդուած են, մնացեալներն ալ գաղթած»:

Ուրիշ օր մը այցելած են պահաթիին անուշով նախկին ուսուցիչի մը, որ Մարտիկին շատ բաներ տեղեկացուցած է. մեծ-հօր ընտանեկան հողը, Մարտիկին հօր կեանքի դրուագները վայրեր, գանազան հայերու կալուածներ, եւն:

Ապա, երկուշաբթի օր մը, Մարտիկ եւ գիւղապետին տղան ճամբայ ելած են այցելելու բռնագողթի ճանապարհը: Շարքը շա, Գանկալ, Մալաթիա, Նեմրութ լեռ, Սամսաթ, Ատրեաման, Սուրոն, Ուրֆա, Հարրան, Այնթապ,

Մարաշ, Զէյթուն, Անտիոք, Չորք Մարգարան, Սիս, Վահկայ, Հաճըն, Կեսարիա, եւ այցելելէ ետք Կապադոկիոյ հին քարայրները, վերադարձած են Զէյփնի:

Այդ ճամբորդութեան ընթացքին, Մարտիկ Մատենդեան նշմարած է որ, (ինչպէս որ անապատ, կ'ըսէին, այդպէս ալ անապատ մնացած է. ո'չ մէկ ծառ բռնագողթի ամբողջ երկարութեան, ո'չ մէկ բուսականութիւն, կարծէք ժամանակը շրժանին մէջ երբեք չէ յառաջացած եւ կեանքը չէ փոխուած: Միայն երկու ամբարտակներ կառուցուած էին, այն ալ այդ վայրերուն մէջ տեղի ունեցած կոտորածները, սարսափները ծածկելու համար, այդ եղեռական վայրերը թաքցընելով, շանացած են կոտորածներու հետքերը անհետացնել եւ սրբել մարդոց, ապագայ սերունդներու յիշողութենէն:

Անցած քաղաքներու որոնք ժամանակին հաշաշատ կեդրոններ եղած էին, Մարտիկ գիրքին մէջ պատմական տեղեկութիւններ կը յայտնաբերէ մեր ապագայ սերունդներուն համար:

Kirkus Reviews հռչակաւոր գրախօսական եւ գրադատական ծառայութիւնը իր գրախօսականին մէջ այսպէս կ'արտայատուի Մատենդեանի Quest for Ravished Paradise գիրքին մասին:

«Շատ հետաքրքրական անձնական տեղեկագրութիւն եւ հայոց պատմութեան կարկառուն հետազոտութիւն մը...»:

Յիշեցնենք որ գիրքին առաջին երկու հատորները Հոլիվուտ Պոլք Ֆէյդիվալի պատմութեան բաժնին առաջին մրցանակները շահած են 2016-ին եւ 2017-ին:

Թէքէեան Մշակութային միութիւնը հեղինակի գիրքերուն ներկայացումը կազմակերպած է որ տեղի պիտի ունենայ Յունոսար 26-ին Պէշկէթիւրեան սրահին մէջ:

Հայկական Տաղասացութիւն 1100-1722

Շարունակուած էջ 16-ԷՍ

սրտի խոր չուզումներու երգիչը կը հանդիսանայ, Բաղէշի մէջ քահանայի ընտանիքէ ծնած, ինքնատիպ, թափառական, հայրենաբաղձ, մարդասէր Մկրտիչ Նաղաշը:

Մ. Նաղաշը ապրած է 1394-1470 թուականներուն: Եղած է գրչագիր, ծաղկող եւ հմուտ նկարիչ, ուրկէ՛ իր «նաղաշ» մակերիւրը: Կնոջ մահէն յետոյ իր տղուն հետ կը տեղափոխուի Ամիր: Նախ քաղաքի եպիսկոպոսն է, ապա Միջազգային հայոց առաջնորդը: Հանգամանքներու բերումով կ'ապրի աստանդական եւ վշտահար կեանք: Կ'երթայ Պոլիս, ապա Զրիմ: Կեանքի ուշ տարիներուն միայն կը վերադառնայ Ամիր:

Մկրտիչ Նաղաշի տաղերը անմիջական են, պարզ ու պատկերաւոր: Ան ժողովուրդին կը յորդորէ չղիմել պանդխտութեան, քանզի ան է շարիքներու եւ դժբախտութիւններու պատճառը: Վերին աստիճան ողբազին են անոր տողիկները: Ահա օրինակ մը. «Հոգի՛, մի՛ ասեր դարիպ, թէ՛ չէ իմ սիրտը կ'արունի»: Բայց, ըստ անոր, կայ շարիքներու աւելի մեծ պատճառ մը՝ ազանութիւնն է ան... «Ինչ

թագաւորք եւ մեծ իշխանք, որ հեղելով իրար կուռան... / Չինչ որ արիւն չերկիր հեղան, ամէնն վասն ազանութեան»:

Կեանքը անցաւոր է, մարմինը վաղազրաւ: Այս միտքերը իրենց գեղարուեստական արտայայտութիւնը կը գտնեն Նաղաշի հետեւեալ տողերուն մէջ. «Գիտի՛ թէ բերդ էի ի յայսմ աշխարհիս, / Մահու ցաւն պատեաց բոլորով զմարմինս, / Նայ շարժեցաւ, փլաւ իմ բոլոր պարիսպս, / Չինչ հասրաթ ունէի՛ մնաց իմ սրտիս», «Աշխարհս անցաւոր է, չլինի թէ խաբէք, / Մահն դափիլ կու գայ, դուք հանց իմացէք»:

1449ին կը բռնկի Միջազգային արաւշին, իսկ 1469ին՝ երկրորդ համաճարակը: Նոյն տարին Մ. Նաղաշը կը գրէ ողբ մը՝ այդ ցնցող աղէտի մասին: Բանաստեղծը հաւանաբար վախճանած է այդ համաճարակի պատճառով: Այսօր, յօդուածիս հրաժեշտ կու տամ այդ ողբէն մէջբերումներ տալով. «Արարիչն արարածոց մեզ բարկացաւ, քաղցր բնութիւնն աստուածային մեզ դառնացաւ... Քանի մանուկ մատաղատուն կ'ի հող դարձաւ, եւ թէ քանի մայր որդեմեռ մորմոքեցաւ... Արդ ո՞վ կարէ լեզուաւ

«Հայրենի եւ Ափիւքահայ Խճանկարներ»

Շարունակուած էջ 17-ԷՍ

«Դուք տոլարճի էք», ըսաւ ան, նոյն ժպիտը թիչ մը աւելի ընդարձակելով իր դէմքին վրայ:

Յստակ էր, թէ ուրախ մթնոլորտ մը կը փորձէր ստեղծել: Բայց քաջալերուած էի իր հաղորդակալութեամբը եւ ծանօթութիւն-բարեկամութիւն մը կամրջելու իր տրամադրութենէն:

« Չէ, մենք լիբանանեանն ենք», ըսի իրեն՝ նոյնպէս ժպիտ մը ուրուագծելով իմ ալ դէմքին վրայ:

Եւ Ստեփանակերտի նախաճաշի այդ մթնոլորտին մէջ, այդ օր, ապրեցայ դարձեալ սփիւռքեան ու սփիւռքահայու մեր կեանքի իրականութիւնները...: Ու տակաւին տարբերութիւնները...: Եւ թէ նորէն՝ ինչքան գունաւոր են մեր սփիւռքահայու իրականութիւնները: Բայց այդ բոլոր տարբերութիւնները կը միանան հայրենի հողին վրայ...:

Երկուշաբթի, Սեպտեմբեր 30-ին, Արցախի Պետական համալսարանին մէջ տեղի կ'ունենայ իմ գիրքի ներկայացումը: Եթէ կային ակադեմական դասախօսներու ներկայացումները, բայց նաեւ ուսանողներու ներկայութիւնը եւ հարցադրումները: Եւ հոն մեր երկրորդ հանրապետութեան համալսարանին մէջ, հայրենի դասախօսներու եւ ուսանողներու հետ, եւ ակադեմական այդ մթնոլորտին մէջ՝ դարձեալ ապրեցայ հայուն ապրելու գրաւականը՝ հայուն միտքը՝ ու այդ մտքին տուն տուող հայուն մշակոյթը, որ գինք կենդանի պահած է պատմութեան տարբեր հոլովոյթներուն մէջէն: Եւ մեր երկրորդ եւ երեկու աւելի «երիտասարդ» հանրապետութիւնը նոյնպէս ներշնչեց այդ հայուն մտքին ու մշակոյթի պահպանումի գրաւականը: Եւ արտաքին գործոց նախարար՝ Պրն. Մասիս Մալիբեանի հետ հանդիպումը եկաւ ապացուցելու թէ այդ պահպանումի ապահովութիւնը առկայ է: «Մենք արդէն քսանութը տարուայ պետականութիւն ենք եւ այս իմաստով նաեւ անհրաժեշտ է որ մեր կապերը աւելի եւս ամրապնդենք սփիւռքի հետ եւ մեր մասնակցութիւնը բերենք հայապահպանումի գործընթացքին մէջ: Եւ ձեր ներկայութիւնը հոս ու ձեր գիրքի շնորհանդէսը կայացնելը Արցախի մէջ՝ մէկ լաւ եւ կարեւոր գրաւական է Արցախ-սփիւռք կապերու ամրապնդմանը», ըսաւ Պրն. Նախարարը:

Այո, քսանութը տարուայ մեր երկրորդ հանրապետութիւնը կազմակերպուած իրականութիւն է այսօր, որ կը շնորհէ ապահովութիւն եւ վստահութիւն հայուն հայապահպանումի գոյապայքարին մէջ եւ ամէն տեղ:

Դոկտ. Արման Նաւասարդեան, Արտակարգ եւ լիազօր դեսպան եւ քաղաքական գիտութիւններու թեկնածու:

պատմել զբան աղէտին, եւ զկսկիծն դառնութեան՝ զողբն սրտին... Լացէք այսօր եւ ողբացէք ամենեքեան, դառն արտասուք հառաչեցէք դուք միաբան»:

Յաջորդ յօդուածի մէջ, յարգելի ընթերցող, պիտի տեսնէք, թէ այդ համաճարակի ցաւերը սպիտակ

նածու՝ Դոցենտ, կը ներկայացնէ «Խթանող դիւանագիտութիւնը» որպէս միացում «պետական ու ոչ պետական՝ իմա քաղաքացիական՝ դիւանագիտութեան գործիքակազմերուն»: Եւ թէ ան բացառապէս հիմնուած է «փափուկ ուժին» վրայ, որ «ներառում է ժամանակակից կեանքի բոլոր ոլորտները (ոչ պետական) եւ պետութեան ներքին ու արտաքին քաղաքականութեան վայրաշարժն է, մղիչ ուժը»: Եւ Դոկտ. Նաւասարդեանը՝ այդ «փափուկ ուժը» կը գտնէ հայուն մշակութային արժէքներուն մէջ: Եւ հոս է, որ ան կը ջատագովէ, թէ «թէ՛ չունես նաւթ կամ կազ, գործարկի մշակութալի արժէքները»: Եւ Դոկտ. Նաւասարդեան կը հաւատայ ազգային մշակութային արժէքներու «ծրագրուած, մշակուած, նպատակադրուած տարածում եւ քարոզարշաւ, պետական ու հանրային կազմակերպութիւններու միջոցով՝ աշխուժօրէն օգտագործելով հայկական սփիւռքի ներուժը»:

«Դուք տոլարճի էք»:

Ո՛չ, իմ սիրելի Մարսիլիայի ազգակից: «Մենք տոլարճի չենք»: Բայց՝ «Լիբանանեանն ալ չենք»: «Մենք հայկականն ենք»:

«Հայկականն ենք»՝ մեր ազգային մշակութային մտքի ու արժէքներու մեծ հարստութեամբը: Եւ այս հարստութիւնը ամուր ենթահողը եւ գրաւականը՝ մեր հայրենի երկու հանրապետութիւնները՝ Հայաստանի եւ Արցախի պետականութիւնները:

Եւ մեր ազգային մշակոյթը հարստացած է, որովհետեւ ունի պատմութեան հետ զալարուած ու կազմուած մեծ իրականութիւնը: Եւ անկախ մեր պատմութեան դժուար վարկածներուն, այս մշակոյթը եւ անոր միտքը չկորսնցուցին իրենց արժէքն ու հարստութիւնը: Եւ մեր երկու հանրապետութիւնները հիմք են՝ ամուր հող, ուր այս արժէքը եւ հարստութիւնը կը լիցքաւորուին:

Հայրենի ու սփիւռքահայ խճանկարներ: Եւ եթէ այս «խճանկարներուն» մէջ կան տարբերութիւններ, եւ կան այդ, բայց կայ այդ բոլորը գիրար միացնող օղակը նաեւ: Եւ այդ օղակը՝ մեր մշակութային մտքի ու արժէքի խճանկարն է: «Փափուկ ուժը»: Այն ուժը, որ մեր մեծ հարստութիւնն է: Այն հարստութիւն, որ պէտք է «գործարկել»: Եւ «գործարկելը»՝ հայրենի ու սփիւռքահայ խճանկարներուն համակերպումով եւ համընթացութեամբ: Եւ այս համակերպումով եւ համընթացութեամբ է, որ մեր մշակութային հարստութիւնը կը պահպանուի:

Հայրենի ու սփիւռքահայ խճանկարներ: Խճանկարներ՝ հայու մշակութային մտքին ու արժէքին ապրուած իրականութիւններով:

Եւ որ պէտք է պահել ու շարունակել:

Եւ որ պէտք է պահել ու շարունակել:

Եւ որ պէտք է պահել ու շարունակել:


Եւ որ պէտք է պահել ու շարունակել:

Եւ որ պէտք է պահել ու շարունակել:

Եւ որ պէտք է պահել ու շարունակել:

(Շարունակելի)

ՄԱՐԱԶԴ



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԱՎԱՅԵԱՆ
(ծն. 1930 թ., Երևան)

Խոր վշտով կը գուժենք մեր թանկագին հօր, եղբոր, մեծ հօր եւ հարազատին՝ Յովհաննէս Բալայեանի մահը, որ պատահեցաւ Կիրակի, Դեկտեմբեր 29, 2019ին:

Հանգուցեալի թաղման Տան Կարգը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, Յունուարի 9ին, Երեկոյեան ժամը 7ին, Պըրպէնքի Առաջնորդարանի Ս. Ղեւոնդեանց եկեղեցոյ մէջ, իսկ Եկեղեցոյ կարգը պիտի կատարուի յաջորդ օրը՝ Ուրբաթ, առաւօտեան ժամը 10ին, նոյն եկեղեցոյ մէջ: Ապա հանգուցեալի թաղման Գերեզմանի Կարգը պիտի կատարուի Rose Hills Memorial Park and Mortuary գերեզմանատան մէջ, 3888 Workman Mill Rd. Whittier, CA 90601:

Սգակիրներ՝

Արա, Ալէք եւ Ալիս Բալայեանները եւ իրենց զաւակները
Հռիփսիկ Արզույեանը եւ իր դուստրը
Ներսէս եւ Սրբուհի Բալայեանները (Տէր Մեսրոպեան) եւ զաւակներն ու թոռները

Մարօ Մարգարեանը եւ դուստրը, իրենց զաւակներն ու թոռները
Մաղլէն Արզույեանը, Գրէյս Բալայեանը, Քնարիկ եւ Մայք Յոլակեանները եւ զաւակները
եւ համայն ազգականներն ու հարազատները:

Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել Հայաստանի ծնողազուրկ եւ հաշմանդամ երեխաների ֆոնտին - Armenain American Orphans Children Fund.

ԳՈՅԺ

Խորապէս կը սգանք Լուսինեալի «Քաջ Նազար» երգիծաթերթի խմբագիր, նոյնանուն հեռուստաժամի հաղորդավար, Հայաստանի Որբ եւ Ծնողազուրկ Երախաներու Օժանդակութեան Մարմնի հիմնադիր եւ նախագահ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԱՎԱՅԵԱՆԻ (Տ. Մեսրոպեան) ցաւալի մահը, որ պատահեցաւ Դեկտեմբերի 29ին, յետ երկարատեւ հիւանդութեան:

Այս տխուր առիթով «Մասիս» իր խորազգաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալ Յովհաննէս Պալայեանի ընտանեկան բոլոր պարագաներուն եւ մերձաւորներուն:

Ցաւակցական

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԱՎԱՅԵԱՆԻ մահուան տխուր առիթով Հ.Մ.Մ.ի վարչութիւնն ու Տիկնանց Օժանդակ Մարմինը իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի եղբոր Ներսէս Պալայեանին, զաւակներուն եւ համայն ընտանեկան պարագաներուն:

Ցաւակցական

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԱՎԱՅԵԱՆԻ մահուան տխուր առիթով, Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնն ու անդամները խորապէս կը ցաւակցին այս մեծ կորուստին համար: Հանգուցեալը իր կարեւոր ներդրումն ունեցած է ՆՍՄՄ-ի մշակութանուէր միջոցառումներուն, ինչպէս նաեւ ազգային, բարեսիրական եւ հայրենասնուէր բազմապիսի նախաձեռնութիւններուն:

Ցաւիտենական հանգիստ յաւերժի ճամբորդին:
Ն.Մ.Մ.Մ.-ի վարչութիւն

Ցաւակցական

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԱՎԱՅԵԱՆԻ մահուան տխուր առիթով Հայ-Ամերիկեան Խորհրդով իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան պարագաներուն եւ հարազատներուն:

Ցաւակցական

Ռուբէն Եոլճեանի մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Գաբրիէլ եւ Մարիա Մոլոյեան իրենց խորազգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար իր այրիին՝ ձիւլիա Եոլճեանին:

Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ի ֆոնտին:

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



ՓԱՅԼԱԿ ԱՀԱՐՈՆԵԱՆ

Հանգուցեալ Փայլակ Ահարոնեանի մահուան Ա. Տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 19 Յունուար 2020-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ մէջ (2215 E. Colorado Blvd., Pasadena), յաւարտ Ս. Պատարագի:

Սգակիրներ՝

Որդին եւ տիկինը՝ Արա եւ Տիանա Ահարոնեան
Դուստրը եւ ամուսինը՝ Արփի եւ Շահէ Կանիմեան
Թոռնիկը՝ Թամար Կանիմեան
Թոռնիկը եւ ամուսինը՝ Ռիթա եւ Անտրէ Սարուխանեան եւ զաւակունք
Թոռնիկը եւ տիկինը՝ Զոհրապ եւ Գարինէ Կանիմեան
Թոռնիկը՝ Տոքթ. Շիրազ Կանիմեան
Թոռնիկը՝ Ալեքս Ահարոնեան
եւ համայն Ահարոնեան, Յովսէփեան, Պիլեմճեան, Քէշիշեան, Կանիմեան, Տեփանեան, Տարեան եւ Սարուխանեան ընտանիքներն ու հարազատները:

Թէքէեան Մշակութային Միութեան Փաստինա-Կլեմտէյլ մասնաճիւղի կազմակերպութեամբ՝

Տեղի պիտի ունենայ

Գեղարուեստական Լուսանկարներու Ցուցահանդէս եւ «Կոյսի համաստեղութիւն» գիրքի շնորհանդէս հայրենի արուեստագէտ Սամուէլ Սեւադայի

Հինգշաբթի, 9 Յունուար 2020-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Ալթադենայի ԹՄՄ Պէշկէթօրիւբեան կեդրոնի սրահին մէջ (1901 N. Allen Avenue, Altadena, CA 91001)

Ցուցահանդէսը բաց պիտի մնայ նաեւ Ուրբաթ, 10 Յունուար 2020-ի երեկոյեան ժամը 5:00-10:00 եւ Շաբաթ, 11 Յունուար 2020-ի առաւօտեան ժամը 10:00-12:00

Մուտքը ազատ Հիւրասիրութիւն

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ

ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻՒ ԸԱՍԱՐ) ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104 (626) 797-7680

ՄԱՐԶԱԿԱՆ

«Ռոման» Պարտուեց, Մխիթարեանը Դուրս Եկաւ Փոխարինման



Իտալիայի առաջնութեան 18-րդ տուրում «Ռոման» ընդունեց «Տորինոյին» եւ պարտութիւն կրեց 0:2 հաշուով: Առաջին խաղակէսի աւելացուած ժամանակում հիւրերը բացեցին հաշիւը իտալացի յարձակող Անդրէա Բելոտիի գեղեցիկ կոլի շնորհիւ: Հայաստանի հաւաքականի եւ «Ռոմայի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը փոխարինման դուրս եկաւ 63-րդ րոպէին: 85-րդ րոպէին VAR-ի օգնութեամբ մրցավարն արձանագրեց ձեռքով խաղ «Ռոմայի» անգլիացի պաշտպան Կրիս Սմոլինգի կողմից սեփական տուգանային հրապարակում: 11 մեթրանոցը դիպուկ իրացրեց Բելոտին՝ դառնալով դուրսի հեղինակ: «Ռոման» 35 միաւորով չորրորդ տեղում է, «Տորինոն» 24 միաւորով 9-րդն է:

Բարայեանը՝ «Լեչէի» Կողմից Յետաքրքրութեան Մասին. Յրաշալի Կը Լինէր Խաղալ Մխիթարեանի Դէմ

Transfermarkt կայքում յայտնուել է տեղեկութիւն, թէ դանիական «Հոբորոյի» եւ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Էդգար Բարայեանի ծառայութիւններով հետաքրքրուած է իտալական «Լեչէն»:



NEWS.am Sport-ի թղթակցի հետ գրոյցում 24-ամեայ ֆուտպոլիստը մեկնաբանեց իր հնարաւոր տեղափոխութիւնն Իտալիայի առաջնութիւն: «Անկեղծ ասած, առաջին անգամ եմ լսում «Լեչէի» կողմից հետաքրքրութեան մասին: Իմ պայմանագիրը «Հոբորոյի» հետ նախատեսուած է մինչեւ 2021 թուականի ամառ: Հիմա իմ բոլոր մտքերն այս թիմի հետ են կապուած»:

Իհարկէ, ինձ հետաքրքիր են նոր մարտահրաւէրներ: Իմ գործակալը կապի մէջ է այլ ակումբների հետ: Տեղափոխութիւնն Ա. Սերիա կը լինէր գերազանց հնարաւորութիւն: Իտալիայում ուժեղ առաջնութիւն է: Հրաշալի կը լինէր խաղալ Մխիթարեանի դէմ», - նշեց Բարայեանը: Դանիայի ընթացիկ առաջնութեան 19 խաղում Բարայեանը դարձել է 1 կոլի եւ 5 կոլային փոխանցման հեղինակ:

«Ռեալը» 35 Միլիոն Եւրո Կը Վճարի «Ֆլամենգոյի» 17-Ամեայ Խաղացողի Համար

Մ ա դ ր ի դ ի «Ռեալը» համաձայնութեան է հասել պրագիլական «Ֆլամենգոյի» հետ 17-ամեայ պրագիլացի յարձակողական կիսապաշտպան Ռեյնիերի տրանսֆերի վերաբերեալ:



Յունուարի 19-ին ֆուտպոլիստը կը դառնայ 18 տարեկան եւ կը կնքի պայմանագիր Արքայական ակումբի հետ, որը նրա տրանսֆերի համար կը վճարի 35 միլիոն եւրո, հաղորդում է Goal.com-ը: Գումարի 80 տոկոսը կը ստանայ «Ֆլամենգոն», մնացածը՝ ֆուտպոլիստն ու նրա գործակալը:

Ռեյնիերին ձեռք բերելու մտադրութիւն ունէին նաեւ Մադրիդի «Աթլետիկոն» եւ Ամստերդամի «Այաքսը»:

«Լիւերպոլը» Պայքարից Դուրս Թողեց «Էվերտոնին»



Ֆուտբոլի Անգլիայի գաւաթի խաղարկութեան 1/32 եզրափակիչի խաղում «Լիւերպոլը» գերմանացի Յուլբըն Կլոպի գլխաւորութեամբ տանը մրցեց «Էվերտոնի» հետ: Հիւրերն իտալացի Կառլո Անչելոտիի ղեկավարութեամբ պարտութիւն կրեցին նուազագոյն հաշուով: 71-րդ րոպէին «Լիւերպոլի» պեւլիզացի յարձակող Դիվոկ Օրիգիի փոխանցումից յետոյ աչքի ընկաւ 19-ամեայ անգլիացի կիսապաշտպան Կերթիս Ջոնսը: «Լիւերպոլը» դուրս եկաւ 1/16 եզրափակիչ:

«Բարսելոնան» Միաւորներ Կորցրեց Յետմապահի Դէմ Խաղում

Սպանիայի առաջնութեան 19-րդ տուրի կեդրոնական խաղում տեղի ունեցաւ կատալոնական դերբի՝ ախոյեան «Բարսելոնան» հիւրընկալուեց «Էսպանյոլին»: Հանդիպումն աւարտուեց ոչ ոքի՝ 2:2 հաշուով: Հանդիպման հաշիւը 23-րդ րոպէին բացեց «Էսպանյոլի» սպանացի պաշտպան Դաւիդ Լոպեսը: 50-րդ րոպէին «Բարսելոնայի» ուրուգուայցի յարձակող Լուիս Սուարեսը խփեց պատասխան կոլը, իսկ 59-րդ րոպէին «Բարսելոնային» առաջ մղեց չիլիացի կիսապաշտպան Արտուրո Վիլալը: «Էսպանյոլի» չինացի յարձակող Ու Լեյը խաղի 88-րդ րոպէին խփեց իր թիմի երկրորդ կոլը ու 1 միաւոր պարգեւեց «Էսպանյոլին»: Հանդիպման 75-րդ րոպէին երկրորդ դեղին քարտը ստանալու պատճառով խաղադաշտից հեռացուեց «Բարսելոնայի» կիսապաշտպան Ֆրենկի դէ Յոնգը: «Բարսելոնան» Լա Լիգայի 19-րդ տուրից յետոյ ունի 40 միաւոր եւ գլխաւորում է մրցաշարային աղիւսակը: «Էսպանյոլը» վերջին տեղում է՝ 11 միաւորով:

«Ռեալը» Հիւրընկալուելիս Յաղթեց «Խետաֆէին»

Սպանիայի առաջնութեան 19-րդ տուրում Մադրիդի «Ռեալն» ուժերը չափեց «Խետաֆէի» հետ: Զինեղին Զիդանի գլխաւորած թիմը յաղթանակ տարաւ 3:0 հաշուով: 34-րդ րոպէին ինքնագոլի հեղինակ դարձաւ «Խետաֆէի» սպանացի դարպասապահ Դաւիդ Սորիբեան: 53-րդ րոպէին աչքի ընկաւ «Ռեալի» ֆրանսացի պաշտպան Ռաֆայէլ Վարանը: Հանդիպման աւելացուած ժամանակի 6-րդ րոպէին «Ռեալի» երրորդ կոլը խփեց խորուաթ կիսապաշտպան Լուկա Մոդրիչը: Այժմ «Ռեալը» 40 միաւորով Լա Լիգայի մրցաշարային աղիւսակի առաջին տեղում է եւ 1 միաւորով առաջ է երկրորդ տեղում գտնուող «Բարսելոնայից», որը կէս գիշերին կմրցի «Էսպանյոլի» հետ:

«Միլանը» Պաշտօնապէս Ներկայացրեց Իբրահիմովիչին

Շուեդիայի ազգային հաւաքականի նախկին յարձակող Զլատան Իբրահիմովիչը Յունուարի 2-ին պայմանագիր է կնքել «Միլանի» հետ եւ բուժօգնում է անցել իտալական ակումբի կազմում: Իբրահիմովիչը «Միլանի» հետ կնքել է կէս տարուայ պայմանագիր՝ 1 տարով երկարաձգելու հնարաւորութեամբ:



Շուէտ ֆուտպոլիստը «Միլանում» հանդէս կը գալ 21 համարի խաղաշապիկով: «Միլանում» կէս տարուայ մրցելուց թնեթի համար Իբրահիմովիչը կը ստանայ 3 միլիոն եւրո աշխատավարձ: Եթէ իտալական ակումբը երկարաձգի շուէտ յարձակողի պայմանագիր ժամկետը, Իբրահիմովիչը կը ստանայ եւս 6 միլիոն եւրո: Յիշեցնենք, որ «Միլանը» Իբրահիմովիչի ձեռքբերման մասին յայտարարել էր Դեկտեմբերի 27-ին: Զլատան Իբրահիմովիչը «Միլանում» հանդէս է եկել նաեւ 2010-2012 թուականներին՝ 85 խաղում խփելով 56 գոլ եւ դառնալով Իտալիայի ախոյեան ու սուպերգաւաթակիր: